10607

# ԲՅՈՒԼԼԵՏԵՆ

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

# ԲԱՆԱՁԵՎԵՐ

Կովկասյան Կարմրադրոշ բանակի կոմյերիտական կազմակերպություն-ների 2-րդ կոնֆերանսի

ЗКСМ5
Կ-76

ՊԵՏՀՐԱՏԻ ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ

Երեվան 1929 թ.

22 MAY 2013
10607
KCM5 Uy
24 SEP 2006
-76
1 DEC 2009

*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.*

# ԲՅՈՒԼԼԵՏԵՆ

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

# ԲԱՆԱՁԵՎԵՐ

Կովկասյան Կարմրադրոշ բանակի կոմյերիտական կազմակերպություն-ների 2-րդ կոնֆերանսի

1929

ՊԵՏՀՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեպ. № 2856(բ.) Պատ. № 1248 Տիր. 500

# ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

## Կովկասյան Կարմրադրոշ Բանակի Քաղաքական Վարչության

## № 6

*ք. Թիֆլիս. 14 հուլիսի 1929 թ.*

ԿԿԲ կոմյերիտական առաջին կոնֆերանսից հետո ընկնող ժամանակաշրջանը բնորոշվում ե բանակի կոմյերիտական կազմակերպության քանակական և վորակական աճմամբ. կոմյերիտմիությունը դարձել ե խոշոր մի ուժ, կուսկազմակերպության իսկական ոգնականը, նրա ազդեցությունը կարմիր բանակային մասսայի վրա տարածողը։

ԿԿԲ կոմյերիտական 2-րդ կոնֆերանսը, մատնանշելով անցած յերկու տարվա այդ հանրագումարը, յելնելով ՀամԼԿՅԵՄ VI համամիութենական կոֆերանսի և ԿԿԲ

VII կուսկոնֆերանսի առաջադրած խնդիրներից, ընդգծեց, որ այդ աճումն անբավարար է մեր առաջ կանգնած հսկայական խնդիրների հետ համեմատած։

Ծավալված սոցիալիստական հարձակման և այդ հողի վրա յերկրում սրված դասակարգային պայքարի շրջանում տարվելիք աշխատանքի պայմանները, կարմիր բանակային մասսաների մարտական և քաղաքական պատրաստության բարձրացման նոր բարդացած անելիքները բանակային կոմյերիտմիությանն առաջադրում են մի շարք նոր պահանջներ։

Կոնֆերանսի վորոշումները, հանդիսանալով վերջին տարիների թանկարժեք փորձի ընդհանրացումը, հսկայական նշանակություն ունեն և պետք է շրջակետ դառնան կոմյերիտմիության աշխատանքը նոր խնդիրներին համեմատ վերակառուցման յենթարկելու համար։ Կոնֆերանսի վորոշումները սահմանում են կոմյերիտմիության աշխատանքը մոտակա շրջանի համար, ուս-



տի և պետք խնամքով ուսումնասիրվի յուրաքանչյուր կոմյերիտականի կողմից։

Կոնֆերանսը հայտնաբերեց քաղորգանների, ռազմկոմների և կուսկազմակերպությունների կողմից կոմյերիտմիության ցույց տված ղեկավարության անբավարար վորակը։ Հաճախ կուսկազմակերպությունները, քաղմարմինները և ռազմկոմները տեղյակ չեն կոմյերիտական աշխատանքի կարևորագույն խնդիրներին, սիստեմատիկաբար և խորը չեն ուսումնասիրում նրա ներքին կյանքը և բոլոր այն պրոցեսները, վոր տեղի յեն ունենում կոմյերիտական կազմակերպություններում. կուսկազմակերպություններում և քաղորգաններում կանոնավոր քննության չեն առնում կոմյերիտական աշխատանքը լիովին և նրա առանձին բնագավառները. բավարար չեն ոգնում կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքը վերակառուցման յենթարկելու, նոր ձևեր ու մեթոդներ հայտնաբերելու գործում։ Այժմ նման դրություն հանդուր-

ժել բացարձակապես չի կարելի և պետք է վերացվի ամենակարճ ժամանակամիջում։

ՊՈԻԿԿԱ-ն առաջարկում է քաղմարմինների, կոմիսարների և կուսկազմակերպությունների ամենորյա աշխատանքի կենտրոնում դնել կոմյերիտական աշխատանքի խնդիրները, կանոնավորապես ստուգելով բջիջների քարտուղարների Համամիութենական 2-րդ խորհրդակցության վորոշումների իրագործումը՝ կոմյերիտմիության կուսակցական ղեկավարության մասին։

ՊՈԻԿԿԱ-ն առաջարկում է կոնֆերանսի վորոշումների մշակումը՝ անցկացնել հետևյալ կերպ․

1. Կոնֆերանսի արդյունքների մասին զեկուցում լսել կուսկոլլեկտիվների և կոմյերիտական խմբակների միացյալ նիստերում։

2. Վաշտային խմբակների ժողովներում քննել «կոմյերիտմիությունը և մարտական պատրաստությունը», «բանակային կոմյերիտմիության խնդիրները ի-



դեոլոգիական ճակատում» զեկուցումներ, յերկրային զորամասերում դրանից զատ՝ «կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքները յերկրային զորամասերում»։

3. Կոնֆերանսի արդյունքների մասին զեկուցում դնել զորամասի պետկազմի ժողովում։

4. Կոնֆերանսի վորոշումներն ավելի խորը ուսումնասիրելու համար կամավոր կարգով խմբակներ ստեղծել։

Կոնֆերանսի վորոշումների իրացմանը պետք է ձեռնարկել անմիջապես։

Կոլլեկտիվներում և խմբակներում լսած զեկուցումների առթիվ ընդունված բանաձևերը պետք է լինեն գործնական, կոնկրետ և ապահովեն նրանց իրացման ստուգումը։

ՊՈԻԿԿԱ-յի պետի տեղակալ՝

**Նեմերզելի**

Հաստատում եմ ԳՈՒԿԿԱ-ի
պետի տեղակալ՝ ՆԵՄԵՐԶԵԼԻ
14 հուլիսի, 1929 թ.

# ԲԱՆԱՁԵՎ

## ՀԱՄԼԿՅԵՄ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ VI ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԼԿՅԵՄ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԼՍՎԱԾ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ

Լսելով և քննելով ընկ. Մարտիրոսյանի զեկուցումը Համամիութենական 6-րդ կոնֆերանսի արդյունքների և Անդրկովկասի ԼԿՅԵՄ հերթական խնդիրների մասին, ԿԿԲ կոմյերիտմիության 2-րդ կոնֆերանսը ամբողջապես և լիովին միանում է Համամիութենական կոնֆերանսի վորոշումներին, կոնֆերանս, վորը հիմք դրեց կոմյերիտական շարժման զարգացման նոր փուլի:

Համամիութենական կոնֆերանսը, ճիշտ վորոշելով միության զարգացման հիմնական ուղիները ժողովրդական տնտեսության



վերակառուցման շրջանում, պարզորոշ կերպով, բոլշևիկորեն դրեց ՀամԼԿՅԵՄ դասակարգային մարտունակության հետագա ամրացման և բանվորա-գյուղացիական յերիտասարդության լայն խավերի վրա նրա ազդեցության ուժեղացման խնդիրները:

Ցելնելով միության VI կոնֆերանսի հիմնական վորոշումներից, ԼԿՅԵՄ բանակային 2-րդ կոնֆերանսը ՀամԼԿՅԵՄ Անդրերկոմին առաջարկում է հետևյալ հիմնական խնդիրները.

1. ՀամԼԿՅԵՄ կենտրոնական խնդիրն է.—պայքար կոմյերիտական կազմակերպությունների դասակարգային ամրակուռության համար, յերիտասարդության լենինյան դաստիարակության, նրա ներգրավելը դասակարգային թշնամու դեմ մղած սոցիալիստական հարձակման մեջ:

Ծավալելով անհաշտ պայքարը լենինիզմից կատարվող բոլոր շեղումների դեմ, հատկապես աջ թեքման և դեպի այն ցույց տված հաշտվողականության դեմ, վորպես գլխավոր վտանգ կուսակցության և հատ-

կապես կոմյերիտմիության համար, անհրաժեշտ է միևնույն ժամանակ չթուլացնել պայքարը ընդդեմ հակահեղափոխական տրոցկիզմի մնացորդների։

Անհրաժեշտ է, վոչ պակաս վճռականությամբ հաղթահարել անսկզբունք գործամոլությանը, վորը հանդիսանում է աջ թեքման տարատեսակներից մեկը կոմյերիտական շարժման մեջ։ Միաժամանակ կոնֆերանսը վոչ ճիշտ և քաղաքականապես սխալ է համարում այն փորձերը, վոր ձգտում են աջ թեքման դեմ մղվող շրջկողմանի պայքարը փոխարինել գործամոլության դեմ մղած պայքարով և մեկնաբանելով այն, վոր իբր «գործամոլությունը հանդիսանում է աջ թեքման գլխավոր արտահայտությունը կոմյերիտմության մեջ։

2. Յերիտասարդության դասակարգային դաստիարակությունը պահանջում է ամրապնդել ինտերնացիոնալ զգացումը և ուժեղացնել պայքարը ամեն տեսակի նացիոնալիզմի դեմ։ Այդ բնագավառում աշխատանքն անհրաժեշտ է ծավալել ՀամԼԿՅԵՄ



Անդրյերկոմի 3-րդ պլենումի վորոշումների հիման վրա։ Յերիտասարդության ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկելով նացիոնալիստական տրամադրությունների կոնկրետ արտահայտությունների դեմ մղվելիք պայքարի շուրջը, անհրաժեշտ է դրա վրա գաղափարապես զինել կոմյերիտականներին։ Արագացնել Անդրկովկասի ազգային կուսակցությունների (դաշնակների, մենշևիկների, մուսաֆաթիստների և այլն) դեմ բալշևիզմի մղած պայքարի պատմության խնդրին նվիրված գրքույկների լույս ընծայումը։

3. Կոմյերիտմիության առաջ հսկայական անելիքներ են կանգնած ժողովրդական տնտեսության հնգամյա պլանի կենսագործման բնագավառում։ Անհրաժեշտ է, վորպեսզի՝

ա) Կոմյերիտականները և բանվորագյուղացիական յերիտասարդության լայն մասսաները ուսումնասիրեն հնգամյա պլանի հիմնական մոմենտները։

բ) Կոմյերիտմիությունը ավելի ակտիվ մասնակցի աշխատանքի արտադրողականության բարձրացման և ինքնարժեքի իջեցման խնդիրներին՝ սոցիալիստական մրցակցության ծավալման, ԿՅԵՄ հարվածային բրիգադներ ստեղծելու, հնարագիտության և այլ ճանապարհով։

գ) Հատուկ ուշադրություն պետք ե հատկացվի մասնագետների և բարձրորակ բանվորների նոր կադրեր պատրաստելու վրա (բաձրագույն կրթական հիմնարկների ուսանողության սոցիալական ընտրություն, ֆաբրիկա-գործարանային դպրոցների աշխատանքի բարելավում՝ որ պիտի տեղի ունենա արհմիությունների հետ վարած միասնական աշխատանքի հիման վրա)։

4. Գյուղի սոցիալական վերակառուցման գործում կոմյերիտմիության ամենագլխավոր խնդիրը հանդիսանում ե գյուղական յերիտասարդության լայն ներգրավումը կոլտնտեսական շինարարության մեջ, բատրակային չքավորական խավերի դա-



շինքի ամրացումը միջակի հետ՝ կուլակության դեմ պայքարելու համար։ Անհրաժեշտ ե գյուղի յուրաքանչյուր կոմյերիտականի առաջ դնել կուսակցության կողմից կիրառվող բոլոր միջոցառումների նկատմամբ (կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների շինարարություն, կոոպերացում, վարկավորում, հարկ, կոնտրակտացիա և այլն), պարզորոշ, պրոլետարական գծի ապահովման խնդիրը։ Գյուղի սոցիալական վերակառուցման համար կադրեր ստեղծելու և ծավալելու նպատակով, Անդրկովկասի ԼԿՅԵՄ կազմակերպությունները պետք ե մշտական աջակցություն ցույց տան բանակին, կարմիր բանակային արձակուրդավորներից գյուղի աշխատավորներ պատրաստելու գործում (կոլտնտեսավարների, կոոպերատորների, տրակտորիստների, խրճիթվարների և այլ պատրաստություններ)։

5. Միութենական աշխատանքի վերակառուցումը դեռևս լիովին չի ընդգրկել բոլոր կազմակերպություններին։ Այդ վերա-

կառուցումը հատկապես թույլ է ընթանում գյուղում։ Անհրաժեշտ է ամեն կերպ աշխուժացնել միութենական աշխատանքը, զարգացնել յերիտասարդական մասսաների ինքնագործունեությունն ու նախաձեռնությունը, լայն ծավալել ներմիութենական դեմոկրատիան, ավելի խորը և ավելի լայն ծավալել ինքնաքննադատությունը կազմակերպությունների բոլոր օղակներում, այդ հիմունքներով վերակառուցելով ևպարզեցնելով միութենական ապարատը։ Բացառիկ մեծ ուշադրություն պիտի հատկացվի միութենական ակտիվի կադրերի պատրաստության և նրա տեսական մակարդակի բարձրացման վրա։

6. Բացառիկ նշանակություն տալով հակակրոնական ճակատի պայքարին, կոնֆերանսը միանգամայն անբավարար է համարում այդ պայքարին ցույց տված կոմյերիտմիության մասնակցությունը։ Անհրաժեշտ է լայն ծավալել հակակրոնական աշխատանքը ինչպես միութենական մասսաների, այնպես ել բանվորա-գյուղացիական յերիտասարդության ամենալայն խավերում։ Մասնավորապես, պետք է լայն և համառորեն մերկացնել կենցաղային նախապաշարումների, սովորությունների և ծիսակատարությունների (չադրա, կրոնական տոներ և այլն) ունեցած արգելիչ դերը սոցիալիստական շինարարության գործում։

Անդրկովկասի պայմաններում հատուկ ուշադրություն պետք է դարձվի աղանդավորության դեմ մղած պայքարին։ Կոնֆերանսը պարտավորեցնում է Համ ԼԿՅԵմ Անդրյերկոմին միջոցներ ձեռք առնել շուտափույթ կարգով հանրամաչելի հակակրոնական աշխատանքի գրականություն հրատարակելու համար։

7. ԼԿՅԵՄ առաջ ծառացած խնդիրների բարդությունը պահանջում է կոմյերիտմիության մաքսիմալ միասնությունը։ Կոմյերիտական կազմակերպությունները պետք է շարունակ ստուգեն իրենց շարքերի վիճակը և հեռացնեն սոցիալապես անհարա-

զատ, վերասերված և նման այլ տարրերին։
Կոնֆերանսը միանգամայն հասունացած և ծայրաստիճան անհրաժեշտ է համարում Համ ԼԿՅԵՄ Կենտկոմի 3-րդ պլենումի կողմից նշված ԼԿՅԵՄ շարքերի ստուգումը և անհրաժեշտ է գտնում ԼԿՅԵՄ շարքերը զտելիս օգտագործել ներկայումս տարվող կուսակցության շարքերի զտման հսկայական փորձը։

8. Կոնֆերանսը նշում է յերիտասարդության և առաջին հերթին կոմյերիտմիության ռազմականացման ուղղությամբ տարվող աշխատանքի անբավարար վիճակը, վորը բացատրվում է կոմյերիտական կոմիտեների և հատկապես ստորին բջիջների կողմից այդ կարևորագույն գործին ցույց տրվող միանգամայն անուշադիր վերաբերմունքով։ Անհրաժեշտ է վճռական բեկում կատարել ԼԿՅԵՄ ռազմական աշխատանքում։ Ռազմականացումը պետք է դառնա կոմյերիտմիության ամբողջ աշխատանքի օրգանական մի մասը։ Պետք է կոմյերիտական



մասսաներում շարունակ մղել պատերազմական վտանգի պրոպագանդը, վճռապես պայքարելով պատերազմական վտանգի թերագնահատման դեմ, վոր հայտաբերվում է առանձին կոմյերիտականների կողմից։ Անհրաժեշտ է կոմյերիտականներին և անկուսակցական յերիտասարդությանը լայն ներգրավել Պաշավիաքիմի շարքերը և գործնական աշխատանքի մեջ։

9. Պետք է նշանակալից չափով ուժեղացնել կոմյերիտական կազմակերպությունների մասնակցությունը նախակոչային պատրաստության մեջ և բանակի հերթական զորակոչի գործում։

Ա098 / 36437

Կոմյերիտմիության հիմնական խնդիրներն այդ բնագավառում հանդիսանում են ամենօրյա աջակցությունը ռազմական մարմիններին զորակոչայինների դասակարգային ընտրության խնդրում, նախակոչայինների անգրագիտության վերացում, «վոչ մի անգրագետ դեպի բանակ» լոզունգի տակ, նախակոչայինների ընդհանուր կուլ-

տուրական մակարդակի բարձրացման համար տարվող աշխատանք, զորակոչայիններին և բնակչությանը ԲԳԿԲ ծառայության պայմանների և խնդիրների պարզաբանումը, պայքար զինակոչման հետ կապված անկարգությունների դեմ և այլն։

10. Կոմյերիտական կազմակերպությունները մինչև հիմա արժանի ուշադրություն չեն դարձրել ռազմակրթական հիմնարկների համալրմանը։ Հետագայում ռազմակրթական հիմնարկների համալրումը պետք է դառնա կոմյերիտական կազմակերպությունների ամենակարևորագույն խնդիրներից մեկը (աջակցել դասակարգային ընտրությանը, քննության գնացողների պատրաստվելուն օգնել)։

11. Կոմյերիտմիությունը պետք է ընդհուպ մոտենա միջհավաքային աշխատանքին, աջակցելով փոփոխիկներին յերկրային զորամասերի պետկազմի շուրջ կազմակերպելուն, պահպանելով փոփոխիկների մեջ դեպի ռազմական աշխատանքը ցույց տված հետաքրքրությունը, կազմակերպելով



և կարգավորելով ռազմական անկյունների, ակումբների, ռազմական գիտելիքների խմբակների աշխատանքը, անցկացնելով փոփոխիկների հատուկ ժողովներ և այլն

12 Քաղաքացիական կազմակերպությունների կապը ռազմական կազմակերպությունների հետ դեռևս իր մեծամասնությամբ ձևական է, տոնային և պատահական։ Այդ բնագավառում անհրաժեշտ և վճռական բեկում։ Անհրաժեշտ և գործարար կապ ստեղծել, քաղաքացիական կազմակերպություններին մոտեցնելով բանակի ամենորյա աշխատանքին (նախակոչային և միջհավաքային աշխատանք, զորանոցներն այցելություն, միասնական կուլտաշխատանք)։ Միաժամանակ անհրաժեշտ է բանակի կոմյերիտմիության կազմակերպություններին էլ ավելի մասնակից անել քաղաքացիական կոմյերիտմության ռազմականացմանը և քաղաքացիական կազմակերպությունների աշխատանքի հարցերի քննությանը։

Հաստատում եմ ՊՈԻԿՄ-ի
պետի տեղակալ՝ ՆԵՄԵՐԶԵԼԻ
14/VII 1929 թ.

## ԲԱՆԱՁԵՎ

### Բանակի Քաղաքական վարչության զեկուցման առթիվ

1 Լսելով ընկ. Նեմերզելու զեկուցումը, ԿԿԲ 2-րդ կոմյերիտական կոմֆերանսը լիովին հավանություն է տալիս բանակի Քաղաքական վարչության ղեկավարության, որը ապահովել է ԿԿԲ մարտունակության աճումը, բանակային կուսակցական կազմակերպությունների առողջ կացությունը և նրա ճիշտ գիծը ինչպես համակուսակցական հարցերի, այնպես էլ ռազմական շինարարության հարցերի վերաբերյալ։

2. Կոնֆերանսն արձանագրում է, որ ԿԿԲ կոմյերիտական կազմակերպությունները յեռանդուն և անսահման աջակցություն են ցույց տվել կուսակցական կազ-



մակերպությանը՝ կուսակցության գլխավոր գծի համար մղած նրա պայքարում։ Կոմյերիտական կազմակերպությունները հայտաբերեցին իրենց, որպես կուսակցության համար հենարան աջ թեքման և հաշտվողականության դեմ մղած պայքարում։ Բայց միևնույն ժամանակ կան այնպիսի փաստեր, ինչպիսին են. ա) կոմյերիտականների նշանակալից մասը բավարար չափով ամբողջական և պարզ հասկացողություն չունի աջ թեքման և հաշտվողականության էության և սոցիալական արմատների մասին. բ) կոմյերիտականների կողմից նկատվում են տատանումներ և նույնիսկ պարզորոշ աջ բնույթ կրող առանձին յելույթներ. գ) տեղի չեն ունեցել աջ թեքման մի շարք արտահայտություններ կոմյերիտական կազմակերպությունների գործնական աշխատանքում. դ) հաճախ աղճատվում է կուսակցության գիծը ամենօրյա գործնական աշխատանքում, ստվերվում են սոցիալիստական շինարարության հիմնական խնդիրները, հայտաբերվում են

գործամոլության տենդենցներ, վորոնք յերբեմն իրենց մեջ կրում են անսկզբունքայնություն և իդեոլոգիական ամրության բացակայություն։ Այդ փաստերը պետք է ամբողջովին և ամենայն լրջությամբ հաշվի առնվեն յուրաքանչյուր խմբակի կողմից։ Աջ թեքման և հաշտվողականության ամեն տեսակի հայտաբերումների դեմ մղած պայքարը, ինչպես տեսականում, այնպես էլ գործնականում, վորպես ամենակարևորագույն խնդիր ներկա շրջանում պետք է շարունակ մնա կոմյերիտական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում։

3. Հակահեղափոխական տրոցկիզմի դեմ մղած պայքարը պետք է ամեն միջոցով ուժեղացվի, հատկապես նկատի ունենալով տրոցկիստների փորձերը, վորով նրանք ձգտում են իրենց քայքայիչ ազդեցությամբ վարակել բանակը և բանակային կոմյերիտական կազմակերպությունը։ Անհրաժեշտ է էլ ավելի մեծ աչալրջություն հայտաբերել տրոցկիզմի դեմ մղած պայքարում,



լիակատար մերկացնել կոմյերիտականների և բոլոր կարմիր բանակայինների շրջանում տրոցկիզմի հակահեղափոխական դերը—անա կոմյերիտական կազմակերպությունների հերթական խնդիրներից մեկը։

4. Կոնֆերանսն ամբողջովին միանում է Բանակային 7-րդ կուսկոնֆերանսի՝ ներբանակային ոպոզիցիայի հարցի վերաբերյալ հանած վորոշումներին և բավականությամբ նշում է ռազմական շինարարության հարցերում թույլտված սխալների և տատանումների լիակատար հաղթահարումը, ԿԿԲ ամբողջ կուսկազմակերպության և պետկազմի միաձուլությունն ու համախմբվածությունը՝ Համ ԿԿ (բ) ԿԿ, ԽՍՀՄ Հեղափոխական Ռազմական Խորհրդի, ՊՈԻՌ-ի հրահանգների հիման վրա։ Կոնֆերանսն իր համոզմունքն է հայտնում այն մասին, վոր ԿԿԲ քաղմարմինները և կուսկազմակերպությունները, ՊՈԻԿԿՍ-յի և ԲԳԿԲ ԹՎ ղեկավարությամբ նույն հիման վրա կշարունակեն ամրապնդել իրենց աղ-

դեցությունը բանակում, իրենց շուրջը համախմբել նրա ամբողջ կազմին և հատկապես ամրապնդել պետկազմի լիակատար միասնությունը, չթույլատրելով ոչ մի տատանում, կենտրոնացնելով իրենց ուշադրությունը բյուրոկրատիզմի, բացերի սըքողման դեմ մղած պայքարի վրա։

5. Անցած 2 տարվա ընթացքում ԿԿԲ կոմյերիտական կազմակերպությունները զգալիորեն աճել են, բարելավել են իրենց աշխատանքը կոմյերիտական կոնֆերանսի որոշումների հիման վրա։ Միութենական աշխատանքի աշխուժացման մեջ զգալի դեր են կատարել բջիջների քարտուղարների համաբանակային 2-րդ խորհրդակցության որոշումները, Կարմիր բանակում տանելիք Համ ԼԿՅԵՄ աշխատանքի մասին հրապարակված նոր կանոնադրությունը, որը կատարելագործված կազմակերպչական ձև է տվել կոմյերիտմիության կառուցմանը ԲԳԿԲ-ում։

Այդ ժամանակաշրջանում պարզորոշ հան-



դես են յեկել և մի շարք թույլ կողմեր ԿԿԲ կոմյերիտական կազմակերպությունների վիճակում և աշխատանքում։ Նրանցից գլխավորները հետևյալներն են՝— ա) կոմյերիտմության մեջ մուտք են գործել կուլակային տրամադրություններ, բ) դանդաղկոտություն է հայտաբերվել կուսակցության և Համ ԼԿՅԵՄ՝ միութենական աշխատանքը վերակառուցման յենթարկելու մասին հանած որոշումները իրագործելու մեջ։

6. Յերկրի և Կարմիր բանակի ժամանակակից կոցությունն առաջին պլանի վրա յե դնում կոմյերիտական մասսայի դասակարգային, հեղափոխական դաստիարակության խնդիրը։ Դրանով պետք է որոշվի ինչպես միութենական քաղկրթությունը, այնպես էլ խմբակների գործնական ամենորյա ամբողջ աշխատանքը։

Այդ խնդրի իրագործման համար առաջին հերթին անհրաժեշտ է.— ա) վճռական պայքար մղել աջ թեքման և հաշտվողակա-

նության դեմ, վորպես կուսակցության և հատկապես կոմյերիտմիության գլխավոր վտանգ, ծ) ուժեղացնել ուշադրությունը իդեոլոգիական ճակատի բոլոր տեղամասերին, գ) շարունակել ԲԳԿԲ մարտունակության, հատկապես մարտական պատրաստության բնագավառի ամրապնդման մեջ կոմյերիտմիության դերի և պատասխանատվության, բարձրացման ուղղությամբ վերցրած կուրսը, դ) ավելի յեռանդուն կերպով փոխանցել աշխատանքի նոր ձևերին և մեթոդներին, հենվելով կոմյերիտական մասսաների նախաձեռնության, ինքնագործունեյության և ինքնաքննադատության վրա, լայն գործադրելով կամավորականության սկզբունքը կոմյերիտական աշխատանքի մեջ։

7. Կոնֆերանսը առաջադրում է կոմյերիտմիության ակտիվացման խնդիրը իդեոլոգիական ճակատի այնպիսի կարևորագույն տեղամասերում, ինչպիսին են, ա) պայքար հակախորհրդային կուսակցու-



թյունների ազդեցության դեմ (վոր հատկապես կարևոր է ազգային դիվիզիաներում), բ) պայքար մեծապետական և այլ ամեն տեսակի նացիոնալիզմի ամեն տեսակի յերևան գալու դեմ, հատուկ ուշադրություն դարձնելով հակասեմիտական յերևույթների դեմ մղած պայքարին, մերկացնելով հակասեմիտիզմի հակահեղափոխական էությունը։

Անհրաժեշտ է վորպեսզի յուրաքանչյուր կոմյերիտական հասկանա, վոր ժամանակակից պայմաններում բոլոր տեսակի և յերանգի նացիոնալիզմը հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրայի դեմ մղած դասակարգային-թշնամի խմբերի պայքարի ամենաուժեղ մեթոդներից մեկը։ Ազգայնական տրամադրությունների հայտաբերման հանդեպ պետք է ստեղծել անհանդուրժելի վերաբերմունք, թեկուզ և նրանք հանդես գան «ընկերական» հանաքի, «անմեղ» ծաղրանքի և այլն դիմակի տակ։ Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է կարողանա

հայտաբերել նույն քողարկված նացիոնալիզմը։

8. Անցած շրջանում կատարվել են առաջին առաջխաղացումները և վորոշ փորձ է կուտակված միութենական աշխատանքի նոր ձևերի և մեթոդների կիրառման ասպարեզում (կուլտուրական արշավ, կարմիր զորանոցի ստուգատեսի կամպանիային, բերք արշավին, խորհուրդների վերընտրության կամպանիային մասնակցելը, կամավորական կորիզների և խմբակների կազմակերպում, համատարած պլաններից հրաժարվելը և հանձնարարականների մեթոդի գործադրումը, սոցիալիստական մրցակցության ցույց տված ծավալվող մասնակցությունը և այլն)։ Այդ փորձը ապացուցում է միութենական աշխատանքի վերակառուցման լոզունգի՝ լիակատար կենսունակությունը Կարմիր բանակում։

Սակայն, աշխատանքը ըստ նորի վերակառուցման յենթարկելու բնագավառում կազմակերպությունների մեծամասնության



մեջ դեռևս անբավարար բեկում է կատարված։

Անհրաժեշտ է ավելի յեռանդուն կենսագործել աշխատանքի նոր ձևերին ու մեթոդներին անցնելը՝ կոմյերիտական աշխատանքի հերթական անելիքների մասին Համ ԿԿ(բ)ԿԿ վորոշման, Բջիջների քարտուղարների համաբանակային 2-րդ խորհրդակցության և Համ ԼԿՅԵՄ 6 րդ կոնֆերանսի վորոշումների հիման վրա։

Միաժամանակ կոնֆերանսը նախազգուշացնում է մի շարք կազմակերպություններում յերևան յեկած յերկու կարգի սխալներից խուսափելու անհրաժեշտության մասին. այդ սխալներն են. ա) աշխատանքի նոր ձևերն ու մեթոդները դիտվում են վորպես ինքնանպատակ, կտրված կոմյերիտմիության հիմնական դասակարգային խնդիրներից, առանց մտահոգվելու լավ բովանդակության մասին, բ) խնամակալություն մասսայի նկատմամբ, մասսայի ինքնագործունեության և նախաձեռնու-

թյան կուրսի անբավարար վճռականությամբ կիրառելը (իսկ յերբեմն համարյա բոլորովին մոռացության տալը)։

9. Կոնֆերանսը արձանագրում է բանակային կոմյերիտական կազմակերպության անընդհատ աճումը և սոցիալական կազմի բարելավումը (մի տարվա ընթացքում ավելացել են հազարից ավելի անդամներ, բարձրացել է բանվորների տոկոսը կազմակերպությունների կազմում 31-ից մինչև 38)։ Միության մեջ բոլոր ընդունվողների մեջ մեծացել է բանվորների ընդհանուր թիվը և տոկոսային բաժինը։

Վորպես ԿԿԲ կոմյերիտմիության աճման վորակական կողմի թերությունները, նշվում են հետևյալները.— ա) վորոշ չափով նվազել է կոմյերիտմիության ընդունելությունը 1929 թվի առաջին կեսին, 1928 թվի առաջին կեսի համեմատ, բ) նկատելի աճել է Համ ԼԿՅԵՄ արտաքսվածների թիվը, վորը վկայում է այն մասին, վոր ուժեղացել է միության մեջ խորթ և անպետք



տարրերի ներս խծկվելը (ԿԿԲ 1926 թվին արտաքսվել է 316 հոգի, 1927 թվին 329 հոգի, 1928 թվին 528 հոգի, 1929 թվի սկզբին շարունակվում է մեծանալ)։

Կոնֆերանսն առաջադրում է հետևյալ խնդիրները.— ա) չթույլատրել նվազելու կոմյերիտմիության աճման ընդհանուր թափը, ձգտելով բարելավել ընդունվողների սոցիալական կազմը, վորի համար ուժեղացնել բանվոր, բատրակ, չքավոր խավերի և կոլտնտեսավարների ներգրավումը, բայց յերբեք չկատարել այդ ընդունվողների ընդհանուր թիվը կրճատելով, բ) ավելի լավ դնել ընդունվողների սոցիալ-ունեցվածքային դրության ստուգումը, չթույլատրելով կոմյերիտմիության մեջ մտնելու սոցիալապես խորթ տարրերին, գ) լայն ծավալել կոմյերիտմիության զտման նախապատրաստումը, դ) մեծ ուշադրություն դարձնել կոմյերիտական մասսայի հետ ունեցած ակտիվի ամենորյա ընկերական կապի վրա և ակտիվի նոր կադրերի մշակման

վրա, ե) ավելի ամուր և անմիջական կապ սահմանել կոմյերիտական կազմակերպությունների և դիվիզիաների ու բանակային կուսակցական հանձնաժողովների միջև, զ) աշխատել վորպեսզի քաղմարմինները և կուսակցական կազմակերպություններն ավելի մեծ մասնակցություն ունենան կոմյերիտմիության աճման կարգավորման գործում։

10. Բանվոր, բատրակ և չքավոր կոմյերիտականներին կուսակցության մեջ ընդունելու նախապատրաստական աշխատանքն ուժեղացնելու մասին տրված բանակային 7-րդ կուսկոնֆերանսի հրահանգը մի շարք կազմակերպություններում կիրառվում է անբավարար չափով։ Կոնֆերանսը կրկին ուշադրություն է հրավիրում այդ չափազանց կարևոր խնդրի վրա և պարտավորեցնում բոլոր խմբակներին սպառիչ միջոցներ ձեռք առնել նրա կատարման համար։

11. Սոցիալիստական մրցակցությունը



Կարմիր բանակում կազմակերպելու և անցկացնելու մեջ կոմյերիտմիությունն ունի չափազանց կարևոր նշանակություն։ Կոմյերիտմիության ակտիվ դերը բնավ չի սահմանափակվում պայմանագրի կնքման մոմենտով։ Կոմյերիտմիությունը պետք է ամենակենդանի մասնակցություն ունենա պայմանագրի իսկական կենսագործման մեջ և ամենամանրազննին, համառ վերահսկողություն ունենա սոցիալիստական մրցակցության կարգով հանձն առած պարտականությունները իրագործելու մեջ։ Իրականացնելով իր առաջավոր դերը սոցիալիստական մրցակցության կիրառման մեջ, խմբակները պետք է մտահոգվեն, վորպեսզի կարմիր բանակային ամբողջ մասսան ակտիվ մասնակցի մրցակցությանը, չթույլատրելով կոմյերիտականների մեկուսացումը։

12. Կոմյերիտական կազմակերպությունները դեռ բավարար չափով գործնականապես չեն աջակցում Համ ԿԿ(բ)ԿԿ հրահանգը

կենսագործելուն, հրահանգ այն մասին, որ անհրաժեշտ է կրասեր հրամկազմից մշակել ակտիվ հասարակական աշխատողներ, որոնք կկարողանան «ժամանակին հաշվի առնել և ընդգրկել կարմիր բանակային մասսաների բոլոր տրամադրությունները, սեփական նախաձեռնությամբ հաղթահարելով նրանց քաղըյարոյական դրության բացասական երևույթները»։ Հաշվի առնելով, որ կրասեր հրամանատարական կազմի $1/_3$ մասը գտնվում է Համ ԼԿՅԵՄ մեջ (հաշվելով և կուսակցության անդամ և թեկնածու կոմյերիտականներին) կոնֆերանսը պարտավորեցնում է բոլոր կազմակերպություններին ուժեղացնել իրենց աջակցությունը կոմբջիջներին և կրասեր հրամանատարներին Կենտկոմի այդ հրահանգները կատարելու մեջ։

13. Միանգամայն անբավարար է աշխատանքի փորձի հաշվառման և օգտագործման դրությունը։ Անհրաժեշտ է վերացնել գոյություն ունեցող կտրվածությունը միև-



նույն կայազորի կոմյերիտական կազմակերպություններիմիջև, տարբերազգի զորամասերի կոմյերիտականների միջև և ձգտել, որպեսզի շարունակ փորձի փոխանակություն կատարվի բանակի կոմյերիտական կազմակերպությունների միջև, զարգացնելով կապի այնպիսի միջոցները, ինչպիսին են կոմյերիտական յերեկոները, պատգամավորություններ ուղարկելը, փոխադարձ ուսումնասիրությունը և այլն։ Անհրաժեշտ է ուժեղացնել կոմյերիտական աշխատանքի լուսաբանությունը պատի թերթերում, գնդային բազմատիրաժներում, (ցանկալի յեն կոմյերիտական թերթիկները), դիվիզիական թերթերում և «Կրասնի Վոյինում»։ Կոնֆերանսն արտահայտվում է հօգուտ «Յերիտասարդ լենինցիները բանակում» թերթիկի օգտին և կոչ է անում բոլոր կազմակերպություններին կենդանի մասնակցություն ունենալ միութենական աշխատանքի փորձի փոխանակման այդ օրգանում։ Բանակի գլնթղթակիցներին ան-

հրաժեշտ է լայն դնել կոմյերիտական խըմբակների կյանքի և աշխատանքի լուսաբանումը։ Անհրաժեշտ է նույնպես լավ դնել բանակի կոմյերիտական աշխատանքի լուսաբանումը «Կրասնայա Զվեզդա»-յում, «Կոմսոմոլսկայա Պրավդա»-յում, և Անդրկովկասի միութենական մամուլում։

14. Նշելով կուսակցական ազդեցության ուժեղացումը և կոմյերիտական կազմակերպությունների վրա և աջակցության խըմբակների ղեկավարության վորոշ բարելավումը, այնուամենայնիվ միաժամանակ պետք է ընդունել, վոր ձեռք բերած հաջողությունները վորակապես միանգամայն անբավարար են հատկապես այն մեծ խընդիրների պայմաններում, վոր ներկայումս դրված են կոմյերիտմիության առաջ։ Անհրաժեշտ է արձանագրել, վոր անբավարար ուշադրություն է նկատվում դեպի կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքին և դրության ռազմական կոմիսարների և քաղղեկների մի մասի կողմից։ Կոնֆերանսը



խնդրում է Պուկկա-ին հրահանգ տալ ուժեղացնելու կոմյերիտմիության կուսակցական ղեկավարությությունը Համ. Կ Կ (բ) Կ Կ վորոշման հիման վրա։

15. Կոմյերիտմիության առաջիկա զոռումը պետք է դառնա կոմյերիտական կազմակերպությունների ուշադրության կենտրոնը։ Անհրաժեշտ է, ա) ձեռք առնել բոլոր միջոցները ժամանակին հայտաբերելու խըմբակների աշխատանքի բոլոր բացերը, բ) լիակատար ներկայացնել կոմյերիտմիության մեջ խցկված խորթ, վերասերված տարրերին, գ) զամանը մասնակից դարձնել կարմիր բանակային վողջ հասարակայնության դ) զըրաման հետ միաժամանակ ապահովել կոմյերիտմիության աճումը ամենից մոտ սոցիալական խմբերի հաշվին։

16 Ինչպես կոմյերիտական կազմակերպությունների ներսում, այնպես էլ զորամասերի շինարարությանը ցույց տված կոմյերիտականների մասնակցության գծով արձանագրելով ինքնաքննադատության

ծավալման մեջ առաջ յեկած տեղաշարժումները, այնուամենայնիվ կոմյերիտական խմբակները անբավարար չափով են տիրացել ինքնաքննադատությանը վորպես աշխատանքի մեթոդ։ Ինքնաքննադատությանը հաճախ չի հաջորդում գործը և բացերի դեմ մղած համառ պայքարը։ Ինքնաքննադատության ծավալմանը և նշված բացերի վերացմանը հատուկ ուշադրություն պետք է դարձնել կապված կոմյերիտական շարքերի առաջիկա զտման հետ։

---

Հաստատում եմ
ՊՈՒԿԿԱ-յի պետի
տեղակալ՝ ՆԵՄԵՐՋԵԼԻ
14 հուլիսի 1929 թ.

## ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Լսելով և քննելով զորքերի հրամանատար ընկ. Ավքսենտյևսկու զեկուցումը բանակի մարտական պատրաստության և բանակային կոմսոմոլի խնդիրների մասին, ԿԿԲ կոմյերիտական 2-րդ կոնֆերանսը նշում է այն բոլոր տարրերի անընդհատ աճումը, վորոնք կազմում են ԲԳԿԲ ամբողջապես և և նրա մարտական ջոկատներից մեկի՝ մեր բազմազգի Կովկասյան Կարմրադրոշ Բանակի մարտունակությունը։

Կոնֆերանսը հատկապես նշում է բանակային կադրերի լիակատար միաձուլությունը և բանակի բոլոր զորամասերի ինտերնացիոնալ մարտական կապի ամրացումը։ Ունեցած նվաճումների հիման վրա

և ԽՍՀՄ ՀՌԽ դիրեկտիվներին համապատասխան, դա ապահովում է բանակի հետագա կատարելագործումը՝ մարտական պատրաստության բոլոր բնագավառներում։

Ներկա շրջանը բնութագրվում է սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում կոմսոմոլի դերի աճմամբ։ Բանակային իրականության պայմաններում կոմյերիտական կազմակերպությունների անընդհատ աճման պայմաններում, բարձրանում է կոմսոմոլի դերն ու նշանակությունը մարտական պատրաստության գործում։

## Հիմնական նվաճումները

Բանակային 1-ին կոնֆերանսի ժամանակից սկսած մեր բանակի կոմյերիտական կազմակերպությունները մեծ աշխատանք ենք կատարել զորամասերի մարտական պատրաստության աճմանն օժանդակելու բնագավառում և ձեռք են բերել մի շարք դրական արդյունքներ։ Հիմնականում այդ արդյունքները հանգում են հետևյալին.



ա) ավելի լրիվ են ընդգրկվել մարտական պատրաստության բոլոր հարցերը և բարելավել են կոմյերիտական կազմակերպությունների գործունեությունն այդ բնագավառում.

բ) Կոմյերիտական մի շարք կազմակերպություններում յերևան է գալիս նախաձեռնություն՝ մարտական պատրաստության ընթացքում լավագույն նվաճումների հասնելուն աջակցելու համար նոր ձևեր վորոնելու գործում.

գ) շնորհիվ լայն ծավալված դաստիարակչական աշխատանքներին, բարձրացել է կոմյերիտականների պատասխանատվության գիտակցությունը և անձնական որինակելիությունը ուսուցման մեջ, կարգապահության մեջ և կենցաղում.

դ) աճել է ուշադրությունը ռազմական ժամանակվա աշխատանքների նկատմամբ կոմյերիտականների պատրաստության խընդիրների վերաբերյալ.

յե) կարմիր զորանոցների ստուգատեսի կամպանիայի ժամանակ կոմսոմոլի հայ-

տարբերած հսկայական ակտիվություն ու ինքնագործունեությունը ապահովեցին այդ կարևորագույն կամպանիայի հաջող ծավալումն ու միանգամայն բավարար արդյունքները։

## Մեր թերությունները

Դրանց հետ միասին անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք թերությունների գոյությունը, վորոնցից ամենագլխավորներն են հանդիսանում.

ա) Վոչ բավականաչափ յեռանդուն աշխատանքի ծավալումը՝ կատարելու համար բջիջների քարտուղարների համաբանակային 2-րդ խորհրդակցության վորոշումները՝ «Կոմյերիտմիության աջակցության խմբակն ու մարտական պատրաստությունը» հարցի առթիվ.

բ) Կոմյերիտական մի շարք կազմակերպությունների յետ մնալը՝ զորամասի մարտական պատրաստության ընթացքի վրա իր ազդեցության ակտիվացման գործում



(մասնավորապես պետք է նշել մարտական պատրաստության հարցերի ծայրահեղորեն թույլ դրումն ու քննարկումը միքանի դիվիզիաների կոմյերիտական կոնֆերանսներում).

գ) Կոմյերիտականների վրա դրվող կարգապահական տույժերի տոկոսը դեռ բարձր է։

Մի շարք կոմյերիտական կազմակերպություններում դեռ անհրաժեշտ թափով չի ծավալվել պայքարը ուսուցման նկատմամբ յեղած հետաքրքրությունը նվազեցնող բոլոր տեսակի բացասական յերևույթների դեմ։ Ուսուցման, ծառայությունը տանելու և կենցաղի մեջ նկատվում են «պոչականության» յերևույթներ.

դ) Բավականաչափ ուշադրություն չի դարձվում կրտսեր հրամանատարին գործնականապես ոգնելու և նրա դաստիարակության խնդրին. մասնավորապես քիչ ուշադրություն է դարձվում կրտսեր հրամանատար-կոմյերիտականի ռազմական և քաղաքական վորակի բարձրացմանը, ինչպիսին

պահանջվում է ԲԳԿԲ հրամանատարական և քաղաքական կազմի մասին Համ ԿԿ (բ) Կենտկոմի կայացրած վորոշումով.

յե) Կոմյերիտական կազմակերպությունները դեռ բավականաչափ չեն ներգրավվել մարտական պատրաստության հիմնական բնագավառներում մեծագույն եֆֆեկտ ձեռք բերելու համար ուսուցման կազմակերպումը բարելավելու ընդհանուր աշխատանքներում։

զ) Կոմյերիտական կազմակերպությունները բավականաչափ չեն մարզվել մարտական պարագային մոտ դաշտային պայմաններում աշխատելուն։ Մի շարք զորամասերում դեռ սիստեմ չի դառել կոմյերիտականների կողմից ռազմական ժամանակվա քաղաշխատանքի հարցերի ուսումնասիրությունը.

ե) Թույլ է ծավալված կոմյերիտականների ու անկուսակցական կարմիր բանակայինների պատրաստությունը՝ Բանվորագյուղացիական յերիտասարդությանը հա-



սարակական աշխատանքների կարգով ռազմականացնելու համար.

ը) Անբավարար է դրված կոմյերիտական խմբակների աշխատանքի փորձի հաշվառումը՝ մարտական պատրաստության բնագավառում։

## Մարտական պատրաստության հերթական խնդիրներն ու կոմսոմոլի պարտականությունները

Բանակի մարտական պատրաստության հերթական խնդիրները տվյալ շրջանում հանդիսանում են մարտավարական արվեստի հետագա բարձրացումը դաշտային աշխատանքում, զորքի յուրաքանչյուր տեսակի կողմից լիովին յուրացնելով իր մասնագիտությունը։

Մեր պրակտիկ գործունեյության մեջ համեմատաբար խոշոր բացեր են հանդիսանում զորամասերի և նրանց ստորաբաժանումների դանդաղաշարժությունը մարտի պատրաստության և անցկացման գործում,

վոչ բավականաչափ հմտություն արագ մանյովրելու, արվեստորեն իր կրակն օգտագործելու, քողարկվելու, հմտորեն գործադրելու պայքարի տեխնիկական միջոցները։

Բանակի կոմյերիտական կազմակերպությունների կարևորագույն պարտականությունները պիտի հանդիսանան.—ակտիվորեն աջակցել պետկազմին ու կուսակցական կազմակերպություններին՝ այդ բացերի վճռական վերացմանն ուղղված նրանց բոլոր միջոցառումների անցկացմանը, և լայն կերպով գործադրել կոմյերիտականի անձնական օրինակելիությունը՝ մարտական ուսուցման բոլոր պահանջների գիտակցական ու ստույգ կատարման գործում։

**Ուշադրություն մարտական դաստիարակությանը**

Բանակի կոմյերիտական կազմակերպությունները պետք է մեծ ուշադրություն դարձնեն մարտական դաստիարակության խնդրին։ Այդ խնդիրը մեկն է հանդիսանում ամենաբարդ խնդիրներից, վորոնք ուշադիր ու մտածված աշխատանք են պահանջում։



Իրենց ամբողջ գործունեության ընթացքում կոմյերիտական կազմակերպությունները պետք է խրախուսեն նախաձեռնություն յերևան բերելը, իր ուժերի նկատմամբ վստահությունը, համառություն յուրաքանչյուր մարտիկի և հատկապես կրտսեր հրամանատարի աշխատանքում։

Դաշտային պատրաստության պայմաններում և՛ ամառը և՛ ձմեռը պետք է լուրջ ուշադրություն դարձվի գործողությունների համարձակ ու արագ կատարման սովորքների դաստիարակման, բոլոր հրամանների և կարգադրությունների ակտիվ ու յեռանդագին կատարման։ Վորոշակիությունն աշխատանքում, արագությունը կատարման մեջ և ճշտապահությունը պետք է խրախուսվեն վոչ միայն դաշտային պարագայում, այլ և ամենօրյա ուսուցման մեջ ու կենցաղում։

## Ռազմական վորակը բարձրացնելու ուղիները

Զորամասերի մարտական պատրաստության մակարդակի բարձրացման գործում կոմյերիտականների կոնկրետ խնդիրները հետևյալներն են. —

ա) սպորտային խմբերում ու խմբակներում կոմյերիտականների լայն մասնակցության ճանապարհով ծավալել ֆիզիքական սպորտային մասսայական աշխատանքը վաշտում, մարտկոցում, հեծելավաշտում, առավելագույն չափով օգտագործել ֆիզկուլտուրան կարմիր բանակայինների քաղաքական և կուլտուրական դաստիարակության նպատակով, մասսայականացնել և մասսայաբես կատարել կարմիր բանակայինների համար սահմանված ֆիզիքական պատրաստության նվաճումների նորմաները (սպորտմինիմումը).

բ) ուժեղացնել սվինամարտին և ռազմակիրարկման բնույթի բոլոր վարժություններին (դաշտային, մարմնամարզական և դրույթային զորադկիք, կեցվածք և այլն) տիրապետելու աշխատանքները.



գ) հասնել հրաձգային պատրաստության կալ մակարդակի, մաքսիմում չափով ուժեղացնել հոգատարությունը, զենքը պահելու և մարտական պարագայում նրան լավագույն կերպով տիրապետելու հմտություն մշակելու նկատառմամբ, լայնորեն զարգացնել հրաձգային սպորտի բոլոր տեսակները. լայն նախաձեռնություն հայտաբերել արտադպրոցական ժամերին կարմիր բանակայինների հրաձգային կատարելագործման և զանազան հրաձգային մրցակցությունների կազմակերպման գործում.

դ) աջակցել սնայպերիզմի զարգացման բանակի զորամասերում, զորամասերի կոմյերիտական խմբակներից առաջ քաշ՛լ և պատրաստել սնայպերներ.

ե) ուժեղացնել կարմիր բանակի պայքարի տեխնիկական միջոցների ուսումնասիրությունը.

դ) բարձրացնել կոմյերիտականների մարտական ակտիվությունը և ուշիմությունը դաշտային բոլոր պարապմունքներում (կոմյերիտականը—լավագույն հետախույզ, դիտող և այլն),

ե) կոմյերիտական խմբակներին մարզել մարտական պարագային մոտ պայմաններում (մարտավարական պարապմունքներում և մանյովրներում), կոմյերիտական աշխատանքների կազմակերպման գործում յուրաքանչյուր կոմյերիտականի պատվաստել գործնական սովորքներ դաշտում անհատական քաղաքական աշխատանքներ տանելու. կոմյերիտական խմբակներում դնել ռազմական ժամանակվա քաղաշխատանքի հարցերի սիստեմատիկ ուսուցում, շտաբային, հատուկ և արտաշարային կամանդաների ու ստորաբաժանումների կոմյերիտականներին և կարմիր բանակայիններին քաշել մարտական պատրաստության մակարդակի բարձրացման ընդհանուր աշխատանքների մեջ։



Մասնագիտական զորամասերում կոմյերիտական կազմակերպությունների առաջ, մարտավարական—հրաձգային պատրաստության մակարդակի բարձրացման աջակցելուց զատ, առաջադրվում է այն գիտելիքների լիովին յուրացումը, վորոնք տվյալ զորամասի մասնագիտական պատրաստության առանցքն են կազմում և հասնել զորքի տվյալ տեսակում տարվող մասնագիտական պարապմունքների և աշխատանքների սահմանված նորմաներին։

## Սոցիալիստական մրցությունը

Մարտունակության բարձրացման կարևորագույն մեթոդներից մեկն է հանդիսանում զորամասերի միջև, զորամասերի ներսում և ստորաբաժանումների միջև տարվող սոցիալիստական մրցակցությունը։ Մրցակցությունը կարող է և պետք է լայն ծավալվի մարտական պատրաստության և նյութական-կենցաղային սպասարկման հարցերի շուրջ։ Մրցակցության կազմակերպ-

ման և անցկացման գործում կոմսոմոլը նշանակալից դեր ունի։

Բանակում կոմյերիտական կազմակերպությունների գլխավորագույն պարտականությունն է հանդիսանում՝ տալ իր նախաձեռնությունը, հեղափոխական խանդավառություն ստեղծել ամբողջ կարմիր-բանակային մասսայի մեջ մրցակցության գործում ամենամեծ արդյունքների հասնելու համար։

Սոցիալիստական մրցակցությունն անցկացնելիս անհրաժեշտ է պատասխանատվության լիակատար գիտակցում և ձգտում՝ իր ստորաբաժանման աշխատանքում յուրաքանչյուր առանձին կոմյերիտականի և կոմյերիտական խմբակի կողմից ամբողջապես, հասնելու ավելի մեծ արդյունքների։ Սոցիալիստական մրցակցության ընթացքում ձեռք բերված նվաճումները պետք է լայն կերպով մասսայականացնել բանակային մամուլում, դիվիզիական թերթերում և զորամասի պատի թերթերում։



## Պահանջներ խմբակներին յեվ պետկազմին

Կոմյերիտական կազմակերպությունների կողմից նրանց առաջ դրված խնդիրների հաջող լուծումը պահանջում է.—

ա) խմբակներ ստեղծելու և անհատական կցումների կարգով յետ մնացողներին ավելի պատրաստած ընկերներ կցելու ճանապարհով սիստեմատիկ օգնություն կազմակերպել ուսուցման այս կամ այն բնագավառի յուրացման գործում յետ մնացող կոմյերիտականների և անկուսակցական կարմիր բանակայինների համար.

բ) կոմյերիտական կրտսեր հրամանատարից պահանջվում է ավելի մանրազնին կերպով պատրաստվել կարմիր բանակայինների հետ տարվելիք պարապմունքներին, հրաձգության, ֆիզիկական պատրաստության, կանոնագրքերն իմանալու, հրահանգներ տալու և նրանց կատարումն անպայման ստուգելու, նույնպես և արտադպրոցական աշխատանքների կարգով կարմիր

բանակայինների ռազմական գիտելիքների կատարելագործման մեջ անձնական օրինակ դառնալ իր ստորաբաժանման բոլոր կարմիր բանակայինների համար.

գ) կոմյերիտական խմբակների ժողովներում դեկուցումների ձևով սիստեմատիկ կերպով դնել մարտական պատրաստության և տնտեսական կենցաղային սպասարկման հարցերը, դնել հրամանատարների և քաղաշխատողների զրույցները՝ ուսուցման առանձին կոնկրետ հարցերի և դրանից բղխող՝ կոմյերիտականների խնդիրների առթիվ. պետք է ամենօրյա աշխատանքում բարելավվի կոմյերիտական խմբակների կապը պետկազմի հետ. պետկազմի, և առաջին հերթին կուսակցական պետկազմի կողմից անհրաժեշտ է իր գործնական աշխատանքներում մեծ չափով հաշվի առնել և օգտագործել կոմյերիտական խմբակների փորձը՝ զորամասի մարտական պատրաստությունը բարձրացնելու գործում.

դ) կոմյերիտական աշխատանքների նոր



ձևերի խորացումը, վորոնք մեծ հետաքրքրություն կառեղծեյին կոմյերիտականների մեջ՝ մարտական պատրաստության գործում, ինչպես օրինակ—ռազմական խաղերը, կոմյերիտական խմբակների մրցակցությունն իրար մրջև, զանազան մրցությունները, մարտավարժական ու հրաձգային հետաքրքիր խնդիրների լուծումը քարտեզով և տեղանքում, ստուգատեսները, կրտսեր հրամանատար-կոմյերիտականների խորհրդակցությունները և այլն.

ե) զորամասի մարտական պատրաստության բարձրացման համար կոմյերիտականների կատարած ամբողջ աշխատանքի փորձի սիստեմատիկ հաշվառման դրումը. անհրաժեշտ է «Կրասնի Վոյինի» կոմյերիտական յերեսի միջոցով կազմակերպել այդ աշխատանքի փորձի լայն հաշվեառում բանակի մասշտաբով և առանձնապես համարային ու ազգային զորամասերի կոմյերիտական կազմակերպությունների միջև, նույնպես և վերջիններս իրար միջև՝ պատգամա-

վորություններ ուղարկելու, գնդային բյուրոների միասին խորհրդակցություններ ունենալու, փոխադարձ հետազոտության, գրագրության և այլ միջոցներով։

## Կոմյերիտականների հաջողությունների յեվ կարգապահության հաշվառումը

Խմբակներում կարող են առանձնացվել մարտական պատրաստության առանձին ընագավառներով (հրաձգային գործով, փիզկուլտուրայով, տնտեսական սպասարկումով և այլն) հետաքրքրվող կոմյերիտականներ (գերազանցապես կրտսեր և միջին հրամանատար. կոմյերիտականներից) վորոնց պարտականությունն է հանդիսանում հաշվի առնել բոլոր կոմյերիտական խմբակների ռազմական վորակի բարձրացման համար կատարվող ինքնագործնեյական աշխատանքների հառաջադիմությունն ու կազմակերպվածությունը։ Առանձնացված ընկերներն իրենց աշխատանքների համար հաշվետու յեն լինում նախագահությունների և խմբակների ժողովների առաջ։



Խմբակների ժողովներում անհրաժեշտ է դնել հրամանատարի կամ քաղղեկի զեկուցումը կարգապահության դրության և կոմյերիտականների խնդիրների մասին։ Խմբակի պատասխանատու կազմակերպիչը պետք է հաշվի առնի կոմյերիտականների կարգապահությունը և միջոցներ ձեռք առնի լայն հասարակական կարծիք ստեղծելու կարգապահության ամրացման, նրա կոնկրետ խախտումների դեմ պայքարելու և ավելի կարգապահ ու իրենց պարտականությունները շատ լավ կատարողներին խրախուսելու խնդիրների շուրջ։

Ամբողջ զորամասի մասշտաբով մարտական պատրաստության հանրագումարները տալիս (ձմեռային շրջանի, ամառային շրջանի կամ ամբողջ տարվա) անհրաժեշտ է ապահովել կոմյերիտականների առաջադիմության աստիճանի հայտաբերումը և աջակցության առանձին խմբակների ու ամբողջապես կոմյերիտական կազմակերպությունների նվաճումները մարտական պատրաս-

տության բոլոր բնագավառներում։ Հետագայում անհրաժեշտ է օգտագործել ստացված տվյալները՝ մասսայականացնելու համար կոմսոմոլի դերն ու նվաճումները և կոմյերիտական խմբակների առաջ հետագա աշխատանքի գործնական խնդիրներ դնելու համար։ Կուսակցությանն աջակցող կոմյերիտական խմբակների ամբողջ աշխատանքները գնահատելու համար հիմնական հայտանշան պիտի հանդիսանա մարտական պատրաստության բարձրացման աշխատանքներում նրանց նվաճումների և թերությունների հաշվեառումը։

### Անկուսակցական կարմիր բանակայինների համախմբումը կոմսոմոլի շուրջ՝ զորամասի մարտունակության ընդհանուր բարձրացման համար

Կոմյերիտականների ռազմական որակի բարձրացման ամբողջ աշխատանքն անհրաժեշտ է սերտորեն կապել ամբողջ զորամասի մարտական պատրաստության մակար-



դակի բարձրացման խնդիրների հետ։ Զանազան մրցակցություններ, մրցություններ, և այլն անցկացնելու ժամանակ կոմյերիտականների կողմից անկուսակցական կարմիր բանակայիններից առանձնանալու տեղ-տեղ նշված դեպքերը պետք է վճռականապես վերացվեն։

Լինելով մարտական պատրաստության բնագավառում զանազան տեսակի ինքնագործնեյական պարապմունքների նախաձեռնողները, կոմյերիտականները հանդիսանում են այն կորիզը, որի շուրջ կազմակերպվում են սպորտբաժանման և զորամասի բոլոր կարմիր բանակայինները։ Դա չի բացասում իրենց՝ կոմյերիտականների պատրաստության մեջ ցեղած նվաճումների ու թերությունների առանձին հաշվառումը և խմբակի կողմից հատուկ օգնությունը յետ մնացող ընկերներին։

### Տնտեսական ապարատի աշխատանքի բարելավումը

Կոմյերիտական խմբակների լուրջ ուշադրությունը պետք է գրավեն զորամասի տնտեսական և սանիտարական ապարատի գործունեության բարելավման խնդիրները, կարմիր անկյուններին սպասարկելու գործում այդ ապարատների մեծ ճկունության հասնելը (սննունդի վորակի, զորանոցների և սպասարկող հիմնարկների սանիտարական դրության, վերանորոգման, զգեստներն ու հանդերձանքը պահելու և այլն բարելավումը)։

Խմբակները պետք է սերտորեն կապվեն տնտեսական աջակցության կոմիսիաների հետ, մեծ ազդեցություն ունենան նրանց աշխատանքների վրա և պետ ու հրամկազմի առաջ ավելի հաճախ դնեն զորամասի տնտեսական և սանիտարական սպասարկման, տնտեսապարատի և այլն աշխատանքների ռացիոնալացման վերաբերող հարցեր և առաջարկություններ։



Անհրաժեշտ է նույնպես գործադրել կոմյերիտականներին տնտեսական և սանիտարական ստորին աշխատանքների համար պատրաստելը (վորպես մատակարարներ, սանհրահանգիչներ), անցկացնել կոմյերիտական—տնտեսավարների խորհրդակցություններ և այլն։

### Կոմյերիտականը-Պաշը-ավիաքիմի ակտիվիստ

Կոմյերիտական կազմակերպությունները պետք է ստուգեն իրենց անդամների փաստական մասնակցության աստիճանը զորամասի Պաշը·ավիաքիմի աշխատանքներում, ձգտելով հասնել այդ աշխատանքների հետագա ակտիվացման և աշխուժացման։

Մոտակա շրջանի ամենագլխավոր խնդիրներից մեկն է հանդիսանում 1905 թվի ծնված արձակման յենթակա կոմյերիտականների լավ պատրաստությունը՝ վորպես գյուղում և քաղաքում ռազմական գործի հրահանգիչներ ու պրոպագանդիստներ։

Հաշվի առնելով ռազմական գրականության թույլ ընթերցումը զորամասերում, կոմյերիտական կազմակերպություններին անհրաժեշտ է ամեն կերպ օգնել գրադարաններին՝ մասսայական ռազմական գրքերըն ու հանդեսները դեպի ընթերցողը մղելու, իր վրա վերցնելով համապատասխան զրույցների, ռազմական գրքի յերեկոներ և այլն անցկացնելու նախաձեռնությունը։

---

Հաստատում եմ
Պուկկա-ի պետի տեղակալ՝
ՆԵՄԵՐՋԵԼԻ
14 հուլիսի 1929 թիվ

# ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՄՍՈՄՈԼԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Պայքարն իդեոլոգիական ճակատում վերջին ժամանակներս, կապված կուլակային-նեպմանական տարրերի վրա սոցիալիստական հարձակման ուժեղացման հետ, ձեռք է բերում հատուկ սրություն։ Նահանջելով պրոլետարիատի աճող ուժերի ճնշման տակ, կապիտալիստական տարրերը իդեոլոգիական բնագավառում վոչ միայն կատաղի դիմադրություն են ցույց տալիս, այլ և աշխատում են անցնել հակահարձակման։ Դասակարգային պայքարն առանձնապես սուր ձևեր է ընդունում աճող սերնդին նըվաճելու գծով։

«Պրոլետարական մասսաների ամեն կերպ մոբիլիզացիան և իդեոլոգիական ու կուլ-

տուրական ճակատում պայքարի հաջող վարումը» համաձայն 15-րդ կուսհամագումարի դիրեկտիվին, հանդիսանում է կոմսոմոլի հերթական մարտական խնդիրը։

Բանակի կոմյերիտական կազմակերպությունները, որոնք վերջին տարիներում նշանակալից չափով աճել ու ամրացել են, պետք է աչքի ընկնող դեր խաղան իդեոլոգիական պայքարի ճակատում։ Նրանք պետք է անհաշտ մարտիկներ հանդիսանան հանուն պրոլետարական իդեոլոգիայի, հանուն յերիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակության։ Այդ նպատակով ամենից առաջ անհրաժեշտ է հասնել կոմյերիտական շարքերի դասակարգային կոփվածության, նրանց բոլշևիկյան դաստիարակության և ամբողջ յերիտասարդության գաղափարական -քաղաքական մակարդակի բարձրացման։

Կոմսոմոլի աշխատանքների ուժեղացմանն ու բարելավմանը իդեոլոգիական ճակատում պետք է հասնել կոմյերիտական մասսաների ինքնագործունեության և նախաձեռնության ավելի համարձակ ծավալումով, միութենական աշխատանքների կատարման կամավորականության լայն գործադրման և ինքնաքննադատության յետանդուն զարգացման ճանապարհով։



### Պայքար աջ թեքման յեվ հաշտվողականության դեմ

Աջ թեքումը, վորն իրենից ներկայացնում է դասակարգային թշնամու ճնշման տակ լենինյան դիրքերի բացահայտ-օպորտունիստական հանձնումը, սոցիալիստական շինարարության տվյալ շրջանում հանդիսանում է գլխավոր վտանգը կուսակցության համար։ Աջ թեքումն էլ ավելի մեծ վտանգ է ներկայացնում կոմսոմոլի համար, վորպես պակաս կոփված և իր սոցիալական կազմով կուսակցությունից ավելի լայն կազմակերպության համար,

Անդրկովկասի պայմաններում աջ թեքումն արտահայտվում է նույնպես ուկլոնիստական -ազգայնական տենդենցներում, ազգայնականության նկատմամբ համբերատար վերաբերմունքով։

Բանակի կոմյերիտական կազմակերպություններում կոնֆերանսը նշում ե աջ թեքման մի շարք արտահայտություններ, վորոնք են—ա) աջերի դիրքերը պաշտպանող մի շարք յելույթներ՝ համեմատաբար ավելի հետամնաց և կուլակային ազդեցությունն արտահայտող կոմյերիտականների կողմից, բ) կուլակային տրամադրությունների ներծծումը կոմսոմոլի մեջ (վորոշ կոմյերիտականների համար գյուղը չի բաժանվում դասակարգերի· կապիտալիստական տարրերի վրա հարձակումն ընդունվում ե վորպես հարձակում «ամբողջ գյուղացիության վրա». անբավականություն կա կոլլեկտիվացման հիմունքներով գյուղատնտեսության վերակառուցման վճռական կուրսի նկատմամբ և այլն), գ) պոչականությունը, այսինքն կարմիր բանակային մասսայի հետամնաց մասի տրամադրություններին հարմարվելը, դ) գործամոլությունը, այսինքն իր ամենորյա գործնական աշխատանքը գլխավոր գծի ու



սոցիալիստական շինարարության հեռանկարների հետ կապել չկարողանալն ու չըցանկանալը։

Վորոշ կոմյերիտականներ հաշտվողականորեն են տրամադրված աջ թեքման նկատմամբ։ Նրանք չեն հասկանում, վոր հաշտվողականները գործնականապես միշտ աջակցություն են ցույց տալիս կուսակցության գծից թեքումներին։

Շատ կոմյերիտականներ, հատկապես նոր ընդունվածները, դեռ պարզ կերպով չեն հասկանում աջ թեքման սոցյալ տնտեսական արմատները, պարզ չեն պատկերացնում իրենց աջ ոպպոզիցիայի հետ կուսակցության ունեցած տարաձայնության եյությունը։

Շնորհիվ այս բոլորի, ամբողջ կոմյերիտական մասսայի գաղափարական սպառազինումը՝ պայքարելու համար աջ թեքման և նրա նկատմամբ հաշտվողականության դեմ, պետք ե կենտրոնական խնդիրը լինի կոմյերիտական կազմակերպությունների։

Անհրաժեշտ է—.

1. Խորացրած պրոպագանդիստական աշխատանքի միջոցով հասնել նրան, վոր յուրաքանչյուր կոմյերիտական պարզ կերպով հասկանա կուսակցության գլխավոր գիծը, աջերի օպորտունիստական խեղաթյուրումների արմատներն ու էյությունը, ապրած դժվարությունների բնույթը և նրանց հաղթահարման ուղիները, կուլակային տրամադրությունների աղբյուրներն ու էյությունը։

2. Վճռական հակահարված տալ աջ իդեոլոգիայի բոլոր արտահայտություններին ինչպես թեորիայում, նույնպես և պրակտիկայում, հայտաբերելով և մերկացնելով, աջ թեքման ու հաշտվողականության արտահայտության յուրաքանչյուր կոնկրետ փաստ։

3. Ամբողջ յեռանդով ծավալել գյուղի սոցիալիստական վերակառուցման մեջ կոմսոմոլի մասնակցության մասին 6-րդ համամիութենական կոնֆերանսի վորոշում-



ների ուսումնասիրությունը, մասսայականացնել և կենսագործել այդ վորոշումները։

4. Ամեն կերպ օգնել կուսկազմակերպություններին՝ 1905 թվի արձակուրդավորներին գյուղում աշխատելու համար պատրաստելուն, հատկապես ավելի առաջավոր կարմիր բանակայիններից կոլտնտես շարժման կազմակերպիչներ պատրաստելուն։ Հատուկ ուշադրություն դարձնել կոմյերիտականներին գյուղի աշխատանքներին պատրաստելուն։

5. Կարմիր բանակայինների հետ տարվող բոլոր աշխատանքներում անցկացնել վորոշակի դասակարգային գիծ։ Հատկապես պետք է ուժեղացվի ուշադրությունը քաղպարապմունքների գաղափարական կայունությունը և յուրաքանչյուր հարցի դրման ժամանակ դասակարգային սրությունն ապահովելուն։ Կոմյերիտականները պետք է ամեն կերպ նպաստեն խմբակավարին քաղպարապմունքների բովանդակության բարելավման և ակտիվացման գործում։ Անց-

կացվող քաղպարապմունքների վորակն ու կոմյերիտականների ունեցած դերը նրանցում պետք է լինի կոմսոմոլի խմբակների չթուլացվող ուշադրության ներքո։

6. Ուժեղացնել կապն ու փոխադարձ ինֆորմացիան կոմյերիտական կազմակերպությունների և քաղապարատի միջև՝ զորամասում յեղած կուլակային տրամադրությունների հարցերի առթիվ։

7. Մեծ չափով ոգտագործել կապը կոմսոմոլի գյուղական բջիջների հետ (համալրման շրջաններում) ոժանդակելու համար գյուղի սոցիալիստական վերակառուցմանը։

Գլխավոր հարվածի ուղղումն աջ թեքման դեմ վոչ մի դեպքում չի նշանակում թուլացնել պայքարը տրոցկիզմի դեմ։ Տրոցկիզմի մնացորդների վերջնականապես արմատախիլ անելը առաջվա նման պետք է իր վրա գրավի կոմյերիտական կազմակերպությունների ուշադրությանը, հատկապես նկատի առնելով առանձին կոմյերիտականների կողմից տրոցկիզմը համակրելու հայ-



տաբերված դեպքերը։ Անհրաժեշտ է նույնպես լիովին վերացնել տրոցկիզմի հակահեղափոխական դերի տեղ-տեղ հայտաբերված թերագնահատումը։

**Ինտերնացիոնալ դաստիարակություն, պայքար նացիոնալիզմի դեմ**

Մեր քաղաքական հակառակորդների դասակարգային պայքարի հիմնական ձևերից մեկն է հանդիսանում նացիոնալիզմը, վորի աճումը պայմանավորված է դասակարգային պայքարի սրումով։ Ազգայնական տարրերը հատուկ ուշադրություն են դարձնում յերիտասարդության մշակմանը, հասնելով այդ ուղղությամբ վորոշ հետևանքների։

Ընդդեմ ամեն տեսակի նացիոնալիզմի— վեհապետականության, շովինիզմի, հայատյացության, հանուն յերիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակության կոմսոմոլը պետք է տանի ամենայեռանդուն և լայն աշխատանք։

Անհրաժեշտ է—

1. Լայն պրոպագանդիստական աշխատանք ծավալել բացատրելու համար կուսակցության քաղաքականությունն ազգային հարցում, նույնպես և նացիոնալիզմի արմատներն ու էությունը։ Կուսակցության ազգային քաղաքականության հարցը մտցնել միութենական դպրոցների ծրագրում։

2. Անուշադիր չթողնել ազգայնական իդեոլոգիայի թեկուզ ամենանվազ արտահայտությունը, ինչպես միութենական կազմակերպության ներսում, նույնպես և անկուսակցականների մեջ, կոնկրետ օրինակներով ու փաստերով մերկացնելով նրա ամբողջ վնասակարությունը, հասնելով ազգայնականության արտահայտությունների հասարակական դատապարտման։

3. Մեծ ուշադրություն դարձնել երիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակության ուժեղացմանը, ձգտելով աշխատանքի հիմնական ձևերով ավելի մեծ չափով ընդգրկել կարմիր բանակային մասսաներին։ Գործադրել հատուկ գրույցները, ժողովներում զեկուցումներ դնելը, առանձին զանազանազգի կազմակերպությունների միջև մրցականչ կազմակերպելը, զորամասից զորամաս պատգամավորություններ ուղարկելը, ինտերնացիոնալ երեկույթներ, ազգային փոքրամասնություններին ամենից լավ սպասարկելու մրցակցություններ և այլն։ Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել քաղաքացիական կազմակերպությունների հետ ամենորյա կապ սահմանելուն, ըստ վորում վորպես մեկը գլխավոր խնդիրներից, դնել ինտերնացիոնալ կապի ուժեղացման խնդիրը։



4. Ավելի շատ ուսումնասիրել միջազգային երիտասարդական շարժման հարցերը, Յերիտկոմինտերնի և նրա առանձին սեկցիաների աշխատանքները։

5. Ուժեղացնել պայքարը հրեատյացության (անտիսեմիտիզմի) դեմ, բացատրելով նրա հակահեղափոխական էությունը,

արմատից մերկացնելով և արմատախիլ անելով նրա ամեն տեսակի արտահայտությունը։

6. Լայն ծավալել Անդրկովկասյան Ֆեդերացիայի մասսայականացումը։ Կոնկրետ օրինակներով ցույց տալ յեղբայրական կապի ամրացումը Անդրկովկասի հանրապետությունների աշխատավորության միջև։

7. Ազգայնականության արտահայտությունների դեմ մղած պայքարում գործադրել նաև միութենական ուժերի միջոցները․ անուղղելի ազգայնականներին վռնդել միության շարքերից։

ԿԿԲ կոմյերիտական կազմակերպությունների հատուկ ուշադրությունը պետք է դարձվի պայքարելու Անդրկովկասյան յերիտասարդության հակահեղափոխական խմբակների ու կազմակերպությունների դեմ (յերիտասարդ մարքսիստներ, դաշյերիտմիութենականներ, մուսավաթիստներ և այլն)։ Անհրաժեշտ է յուրաքանչյուր կոմյերիտականի, յուրաքանչյուր կարմիր բանակայինի աչքում յեռանդագին կերպով մերկացնել այդ հակահեղափոխական կազմակերպությունների իսկական դասակարգային բնույթը։ Այդ կազմակերպությունների եյության հետ ծանոթացումն անհրաժեշտ է հիմնականում անցկացնել արդեն միութենական դպրոցներում։ Կոմյերիտական կազմակերպությունները պետք է իր ժամանակին տեղեկություն ստանան յերիտասարդ մարքսիստների, դաշյերիտմիութենականների, մուսավաթիստների տակտիկայի և հերթական լոզունգների մասին։



Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում մի անգամ ևս ընդգծել ԿԿԲ կոմյերիտականների կողմից Անդրկովկասը, նրա քաղաքական դրությունը, նրա տնտեսությունը, կուլտուրան և պատմությունն ուսումնասիրելու անհրաժեշտությունը։ Խնդրել ՊՈԻԿ-ԿԱ-յին տալու այդ հարցի մասին հատուկ մշակված նյութեր։

## Կոմյերիտականի օրինակելիության լոզունգի մասին

Կոմյերիտականների մի մասը, հատկապես Նոր բանակ յեկածներից, իրենց լիովին պարզ չեն պատկերացնում Կարմիր բանակի՝ վորպես պրոլետարական դիկտատուրայի զինված հենարանի շինարարության հիմունքները, պարզ չեն պատկերացնում հեղափոխական կարգապահության և պետկազմի ու շարքային կազմի հատուկ փոխհարաբերության նշանակությունը։ Այդ հողի վրա յերբեմն սկիզբ են առնում կարմիր բանակայիններին պետկազմին հակադրելու դեպքեր. այդպիսի դեպքերում վորոշ կոմյերտականներ աչքից թողնում են, վոր Կարմիր բանակի պայմաններում բոլոր մեզ թշնամի ուժերը (կուլակային տարրերը, տրոցկիստները, մենշևիկները, դաշնակները և այլն) իրենց քայքայիչ աշխատանքում ձգտում են առաջին հերթին կարմիր բանակայիններին հակադրել պետկազմին։



Ամբողջ ներմիութենական դաստիարակչական աշխատանքը պետք է սերտորեն կապված լինի Կարմիր բանակում ՀԱՄԼԿՅԵՄ լոզունգի—բանակի մարտական հզորության ամրացման գործում կոմյերիտականի օրինակելիության լոզունգի հետ։ Հենց դրանով պետք է կոմյերիտականը գործնականապես ապացուցի իր բոլշևիկյան հասունությունը։ Լինել առաջամարտիկ, կուսկազմակերպության և պետկազմի շուրջ համախմբել կարմիր բանակային մասսային, խստորեն կատարել կարգապահության պահանջները,—այդպիսին պետք է լինի կոմյերիտականի վարքագիծը։ Կոմյերիտականը պետք է մասնակցի բոլոր աննորմալությունների դեմ մղվող պայքարին, օգտագործելով բոլոր սահմանված ճանապարհնե-ներն ու միջոցները. բայց այդ պայքարով չի կարող արդարացվել կարգապահության վոչ մի, թեկուզ ամենանվազ խախտումը։ Դրանով է վորոշվում և դաստիարակչական աշխատանքի գիծը ռազմական շինարարության հարցերի առթիվ։

Կոմյերիտական կազմակերպությունները պետք է միջոցներ ձեռք առնեն օգնություն ցույց տալու ուսուցման, ֆիզիկական պատրաստության, ամենօրյա աշխատանքներում յետ մնացող կոմյերիտականներին, վորպեսզի օրինակելիության լոզունգը ռեյալ կերպով իրագործելի լինի յուրաքանչյուր կոմյերիտականի համար։

Այդ ուղղությամբ կարևոր նշանակություն ունի զեկուցումների, զրույցների, քաղաքացիական պատերազմի մասնակիցների հիշողությունների յերեկոների միջոցով Կարմիր գվարդիայի և Կարմիր բանակի մարտական տրադիցաները կոմյերիտականներին տալը։

**Կուլտուրական հեղափոխության հարցերը**

Բանակային կոմսոմոլի առաջ կանգնած են կուլտուրական հեղափոխության մի շարք հարցեր։ Հիմնականում դրանք հանգում են հետևյալին—

1. Անհրաժեշտ է լիովին վերացնել անգրագիտությունը կոմյերիտականների մեջ։ Անգրագիտության և կիսագրագիտության վերացումը կոմյերիտականի համար պետք է լինի միութենական պարտականություն։ Գրագետը պետք է սովորեցնի անգրագետին։ Անկուսակցական կարմիր բանակայինների վերաբերմամբ կոմսոմոլը պետք է ստեղծի համապատասխան բարենպաստ պայմաններ, արագորեն վերացնելու համար անգրագիտությունը (կոմյերիտականների անհատական և խմբակային կցումը անգրագետ կարմիր բանակայիններին, առաջին հերթին չքավորներին և բատրակներին, օգնեն թերթեր կարդալով, ագիտացիա անեն անգրագիտությունն արագորեն վերացնելու համար և այլն)։

Կոնֆերանսն ընդգծում է, վոր քաղաքական հետագա աճումը հնարավոր է միայն կոմյերիտականների ընդհանուր կրթական մակարդակի անընդհատ բարձրացման հիման վրա։

2. Գրականությունն ու կինոն պետք է օգտագործվեն վորպես յերիտասարդության

դաստիարակության ամենահզոր միջոցներից մեկը։ Բանակում կոմսոմոլի խնդիրն է ժամանակակից լավագույն գրական ստեղծագործությունները մոտեցնել կարմիր բանակային մասսային, քննադատորեն գնահատնել զորամասում ստացվող գրականությունը, քննադատական-գրական յերեկոներ, դիսպուտներ կազմակերպելու, ռեցենզիաների և այլ միջոցներով։

Անհրաժեշտ է դնել գրականության բնագավառում կոմյերիտականների հարցումները և դրանց բավարարման չափի ուսումնասիրություն։ Դրա համար անցկացնել հատուկ զրույցներ։

Գրականությունը մասսային մոտեցնելու համար գործադրել հատուկ գեղարվեստական ընթերցանություն. կոմյերիտական ակտիվը պետք է միացած կոմյերիտականներին և անկուսակցական կարմիր բանակայիններին լավագույն գրականություն հանձնարարի։

Նույնպիսի ճանապարհով էլ պետք է աշ-



խատանք տանել կինո-ֆիլմերի և պիեսաների շուրջ, իրենց կարծիքը հասցնելով համապատասխան կազմակերպություններին և մամուլին։ Կազմակերպել կոմյերիտականների կոլեկտիվ հաճախում կինոներն ու թատրոնները անկուսակցական կարմիր բանակայինների հետ միասին։

3. Պայքարը՝ զորանոցում և շարքում հեղափոխական յերգեր ունենալու, բեմում և լենանկյունում հեղափոխական մոտիվներ ունենալու համար պետք է լինի ավելի համառ ու անընդհատ։ Անհրաժեշտ է արագորեն հրաժարվել հին ու անպետք բաներից, փոխարինելով նրանց նոր յերգերով, նոր յերաժշտությամբ։ Հեղափոխական յերգի համար մղվող պայքարում կոմյերիտականները պետք է լինեն առաջին դիրքերում (նվագախումբերի, յերգեցիկ խմբերի ստեղծում, մրցակցությունների անցկացում վաշտերի, խմբակների և այլոց միջև)։

## Հակակրոնական պրոպագանդա

Ցեկեղեցականների ու աղանդավորների ակտիվացումը, կուլակային նեպմանական տարրերի կողմից կրոնական կազմակերպությունների օգտագործումը հակահեղափոխական նպատակներով, կրոնական ագիտացիան Կարմիր բանակ փոխադրելու փորձերը,—այս բոլորը համառորեն ընդգծում են Կարմիր բանակում հակակրոնական պրոպագանդան ամեն կերպ ուժեղացնելու խնդիրը։ Կոմսոմոլի խնդիրն է—հակակրոնական պրոպագանդայի կազմակերպիչ ու խթան հանդիսանալ։

Անհրաժեշտ է.—

1. Վճռականապես հաղթահարել կրոնական տրամադրություններն ու դրա նկատմամբ հաշտվողական վերաբերմունքը կոմյերիտականների մեջ, հասնելով նրան, որ յուրաքանչյուր կոմյերիտական հասկանա կոմկուսակցության ծրագրային պահանջները կրոնի դեմ պայքարելու բնագավառում, գիտակցի կրոնի դեմ պայքարելու հիմնական խնդիրներն ու մեթոդները։



2. Ակտիվ մասնակցություն ունենալ մարտնչող անաստվածների միության բջիջների աշխատանքներում, հասնելով նրան, որ կոմյերիտականները շատ ավելի լայն կերպով մտնեն անաստվածների ընկերության մեջ և ավելի շատ ներգրավվի այնտեղ կարմիր բանակայինների հիմնական մասսան։

Լայն կերպով մասսայականացնել կոմյերիտականների մեջ ԽՍՀՄ անաստվածների երկրորդ համագումարի որոշումները և մշակել համագումարի զինվորական սեկցիայի որոշումները հակակրոնական աշխատանքների մասին ԲԳԿԲ-ում։

3. Հակակրոնական խմբակների և սեմինարների միջոցով պատրաստել ակտիվիստ-անաստված կոմյերիտականների կադր։

4. Հատուկ ուշադրություն դարձնել կարմիր բանակայինների մեջ անհատական ագիտացիային, համառորեն մերկացնելով կրո-

նի դասակարգային էությունն ու նրա արգելիչ դերը սոցիալիստական շինարարության մեջ, միաժամանակ անհրաժեշտ է ցույց տալ նրա հակագիտական բնույթը և ձգտել մշակելու կարմիր բանակայինի մեջ ճիշտ հասկացողություն։

5. Դնել կրոնական ընկերությունների և աղանդների գործունեության ուսումնասիրությունը, մասնավորապես մանրազնին կերպով հաշվի առնել բանակում աշխատանք տանելու փորձերը։

## Միութենական յեվ կուսակցական լուսավորություն

Իդեոլոգիական ճակատում կուսակցության ոգնականի իր դերը կոմսոմոլը կարող է կատարել միայն այն պայմանով, յեթե նա քաղաքականապես լավ պատրաստված լինի։ Միութենական և կուսակցական դպրոցների ցանցն այդ պատրաստության գործում պետք է վճռական դեր խաղան։



Անհրաժեշտ է—

1. Բարձրացնել ծրագրի թեմաների մշակման վորակը, ձգտելով յուրաքանչյուր պարապմունքը կապել ընթացիկ քաղաքական կյանքի և լենինիզմի հիմնական պրոբլեմների հետ։ Միութենական դպրոցներում առանձնացնել ղեկավարների ավելի վորակյալ կազմ։ Դրա հետ միասին կոմյերիտական կազմակերպությունները պետք է ստուգեն առանձին կոմյերիտականների առաջադիմությունը։

2. Հատուկ խմբակներում և ագիտպրոպ կոլլեկտիվներում կազմակերպել կոմյերիտականներին հուզող՝ համեմատաբար ավելի այժմեյական և հետաքրքիր հարցերի մշակումներ։

3. Յուրաքանչյուր կոմյերիտականից, հատկապես ակտիվիստից, պահանջել վոր իր ժամանակին և բավականաչափ տեղյակ լինեն ընթացիկ քաղաքական կյանքի կարևորագույն հարցերին, վորը նախատեսում է թերթերի կանոնավոր և անպայման ընթերցման անհրաժեշտությունը։

Հասնել ակտիվի կողմից «Կոմսոմոլսկայա Պվավդայի», և «Մալադոյ բալշևիկ» ու «Կոմսոմոլսկի ագիտպրոպրաբոտնիկ» հանդեսների սիստեմատիկ ընթերցանության։ Կիրառել կոլլեկտիվ ընթերցանություններ, դրանց հիմնական հոդվածների և նյութերի առթիվ վերլուծումներ, զրույցներ և դիսպուտներ սարքելը։ Բոլոր խմբակներում առանձնացնել թերթերի և հանդեսների ընթերցման կազմակերպիչներ և կարգավորել ընթերցանության ղեկավարությունը։

Նկատի ունենալով ինքնուրույն կերպով թերթ կարդալ չիմացող կոմյերիտականների նշանակալից թիվը, ակտիվիստների ղեկավարությամբ կիրառել կոլլեկտիվ ընթերցանություն։

Կազմակերպել շաբաթը մի անգամ թերթերի առավոտներ (կոլլեկտիվ կերպով մի շաբաթվա թերթերի համառոտ տեսություն), անցկացնել կոմյերիտական կենդանի մասսայական յերեկույթներ, նվիրված ինքնակրթության և թերթերի վրա կատարած կոմյերիտականների աշխատանքին։



4. Կազմակերպել օգնություն դպրոցներում յետ մնացող ընկերների աշխատանքում։

5. Կարգավորել ակտիվ կոմյերիտականների խորացրած պատրաստությունը մարքսիստական-լենինյան խմբակներում, ընթացիկ քաղաքականության խմբակներում և անհատական ինքնակրթության միջոցով։

6. Բարելավել զորամասերին կոմյերիտական գրականություն մատակարարելը, ուղարկել այն ավելի ևս իր ժամանակին։

## Կենցաղի հարցեր

Նոր կենցաղի համար մղվող պայքարը հանդիսանում է իդեոլոգիական պայքարի անբաժանելի մասը և վորպես մեկը հերթական խնդիրներից, պետք է դրվի կոմսոմոլի առաջ։ Կոմսոմոլը պետք է առաջամարտիկը լինի՝ հարբեցողության, փնթիության, սեռական սանձարձակության, կեղտոտության, հայհոյանքի, կնոջ նկատմամբ վոչ ընկերական վերաբերմունքի, սնոտիապաշ-

տության, նախապաշարումների, չաղրայի և այլն դեմ մղած արշավում: Պետք է բոլոր այդպիսի յերևույթների դեմ վճռական պայքարի հանել կոմյերիտականների և անկուսակցական կարմիր բանակայինների լայն մասսաներին: Պետք է կազմակերպել կուլտուրական այնպիսի օջախներ, ինչպիսիք են մաքրության, չծխողների, չխմողների հայհոյանքի թշնամիների և այլն բջիջներ ու խմբակներ: Այդ բոլոր խմբակների բացատրական աշխատանքը պետք է ուղեկցվի պրակտիկ գործով, գործնականապես ցույց տալով:

Կոմսոմոլի ղեկավար օրգանների կողմից անհրաժեշտ է ուժեղացնել այդ խմբակների աշխատանքների ղեկավարությունը, վորը վոչ մի դեպքում չպետք է հասցնի նրանց ինքնագործունեությունը սեղմելուն:

Այժմ ևեթ հատուկ ուշադրություն պետք է դարձնել կարմիր զորանոցների ստուգատեսի արդյունքների ամրապնդմանն ու հետագա զարգացմանը և կուլտուր-կենցաղային հանցանքների վճռական իջեցմանը:



Անհրաժեշտ է ավելի յեռանդուն կերպով պայքարել աշխատանքում կուլտուրականություն մտցնելու համար: Կոմյերիտական կազմակերպության մեջ մասնավորապես խիստ անհաշտվողականություն ստեղծել ծառայական և հասարակական աշխատանքում ժամանակ առժամանակ դեռևս գոյություն ունեցող և լայն չափով տարածված չկատարողականության և անճշտապահության նկատմամբ: Պահանջել և հասնել նրան, վորպեսզի ամեն մի աշխատանք սկսվի և վերջանա ճիշտ ծրագրով նշված ժամանակում, լինի դա պարապմունք, պարտադիր աշխատանքներ ըստ կարգումի, ժողովներ, նիստեր, խորհրդակցություններ, արտադպրոցական աշխատանք և այլն: Կտրականապես պահանջել, վոր նշանակված ժամանակամիջոցում կատարվեն ամեն տեսակի ծառայական և հասարակական հանձնարարությունները:

## Կուսակցական ղեկավարությունը

Իդեոլոգիական ճակատում կոմսոմոլի մեծ խնդիրները կարող են հաջողությամբ կա-

տարվել միայն կուսղեկավարության հետագա բարելավումով։ Անհրաժեշտ է իրացնել Բջիջների քարտուղարների Պուռ-ին կից յերկրորդ խորհրդակցության և կոմյերիտմիության աշխատանքների մասին ՀամԿԿ(բ) Կենտկոմի ապրիլյան վորոշումները։ Իր ժամանակին դնել կոմսոմոլի առաջ կուսակցության քաղաքականության հերթական հարցերը, ամենայն ուշադրությամբ հաշվի առնել կոմյերիտական խմբակներում տեղի ունեցող բոլոր պրոցեսները, առանձնացնել ավելի պատրաստված ու կայուն կուսակցականներին կոմսոմոլում աշխատելու համար, բարձրացնել կուսկորիզի պատասխանատվությունը կոմյերիտմիության իդեոլոգիական աշխատանքի համար,—ահա հիմնականը իդեոլոգիական ճակատի կուսակցական ղեկավարության բնագավառում։

---

Հաստատում եմ
ՊՈՒԿԿԱ-ի պետի տեղակալ՝
ՆԵՄԵՐԶԵԼԻ
14 հուլիսի, 1929 թիվ.

# ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ

## ա Աշխատանքը հավաքներում

1. Յերկրային զորամասերի կոմյերիտական կազմակերպություններում նշվել է, վոր նրանք շարժվել են տեղից՝ դեպի աջակցության վաշտային խմբակների ամրացման, հավաքներում կոմյերիտական կազմի պատիարակության և կարևոր քաղաքական խնդիրների ու մարտական պատրաստության խնդիրների շուրջ համախմբելու աշխատանքների բարելավման ուղղությամբ։ Սակայն, մինչև այժմ հավաքների կոմյերիտական աշխատանքներում տեղի ունեն մի շարք խոշորագույն թերություններ.—

ա) Կոմյերիտական կազմակերպությունների անբավարար ճկունությունը,

հավաքի առանձնահատկությունների համապատասխան աշխատանքն արագ վերակազմել չկարողանալը.

բ) Աշխատանքի թույլ կապվածությունը տեղական կյանքի ու շինարարության հարցերի հետ, հատկապես իր զորամասի համալրման շրջանում։

գ) Թույլ մասնակցությունը զորամասի մարտունակության ամրացման աշխատանքում։

դ) Փոփոխիկ կազմի, այդ թվում և կոմյերիտականների ինտերնացիոնալ դաստիարակության աշխատանքների անբավարար լինելը։

Հավաքներում կոմյերիտական խմբակների աշխատանքի թերությունները նշանակալից չափով բացատրվում են նրանով, որ «յերկրային զորամասերում կոմսոմոլի կուսակցական ղեկավարության ուժեղացման» մասին Բանակային 7-րդ կուսկոնֆերանսի վորոշումները կյանքում կիրառվում են միանգամայն անբավականաչափ։

2. Հավաքների ժամանակի կարճությունը,



դրված խնդիրների բարդությունը և այլ առանձնահատկություններ, կոմյերիտական կազմակերպություններին թելադրում են առաջին հերթին հետևյալ միջոցառումների կիրառման անհրաժեշտությունը.

ա) Հավաքներին նախապատրաստվելու շրջանում մանրազնին կերպով և բազմակողմանիորեն կարգավորել կադրի կոմյերիտական կազմի պատրաստությունը հավաքի աշխատանքներին։

բ) Հավաքների առաջին իսկ որերից ապահովել կոմյերիտական աշխատանքի արագ վերակառուցումը, զորամասի և ստորաբաժանումների առանձնահատկությունների հաշվառման հիման վրա։ Կոմյերիտականների և անկուսակցական փոփոխիկների ակտիվությունը պետք է հավաքների առաջին իսկ որերից ուղղվի ամբողջ փոփոխիկ կազմի մարտական պատրաստության և քաղաքական դաստիարակության ուժեղացման գծով։ Անհրաժեշտ է վճռականապես ուժեղացնել հավաքների ամբողջ աշխատանքի թափն ու վորակը.

գ) Հաշվի առնելով, որ կոմյերիտական փոփոխիկներն ավելի յեն յենթակա մանր բուրժուական ազդեցության, քան կադրի կոմյերիտականները, պետք ե հավաքների առաջին իսկ որերից լայն կերպով ծավալել փոփոխիկ կոմյերիտական կազմի իդիոլոգիական միաձուլության աշխատանքը, ընդհանուր կուսակցական և ընդհանուրմիութենական կյանքի կարևորագույն հարցերի մշակման հիման վրա։ Կուլակային տրամադրությունների վճռական վերացումը ինչպես կոմյերիտականների, նույնպես և անկուսակցական փոփոխիկ կազմի մեջ, կոմյերիտական կազմակերպությունների ամենալուրջ խնդիրներից մեկն ե հավաքներում։ Կուսակցության և խորհրդային իշխանության գլխավոր գծի, մեր միջազգային դրության և դրա հետ կապված Կարմիր բանակի առաջ կանգնած խնդիրների պարզաբանումը պետք ե հիմնական բովանդակությունը հանդիսանա ինչպես ներմիութենական աշխատանքներում, նույնպես և



անկուսակցականների մեջ տարվող աշխատանքներում։ Կոմյերիտականների առաջ պետք ե վորոշակիորեն դրվի՝ գյուղատնտեսության կոլլեկտիվացման և արտադրության գործում նրանց պարտականությունների հարցերը։

3. Հավաքներում կոմյերիտական կազմակերպությունների կարևորագույն խնդիրներից մեկն ե հանդիսանում բազմակողմանի ոգնությունը կուսկազմակերպություններին՝ փոփոխիկ կազմին միջհավաքային աշխատանքներին պատրաստելում։ Այդ աշխատանքների կենսագործման համար անհրաժեշտ ե՝

ա) Լայն կերպով մասնակցել միջհավաքային աշխատանքի խնդիրները ամբողջ փոփոխիկ կազմին բացատրելու և կոմյերիտական ու անկուսակցական ակտիվին աշխատանքի սովորքներ պատվաստելու գործում.

բ) Ամենորյա ոգնություն ցույց տալ ակտիվիստներին սեմինարների պարապմունք-

ների պատրաստության գործում, համալրման շրջանի (տեղի) առանձնահատկություններին համապատասխան միջհավաքային աշխատանքի ձևերի ու մեթոդների առանձին հարցերի առթիվ անցկացնել ամբողջ կոմյերիտական կազմի անհատական և խմբակային մանրազնին հրահանգավորում, միջհավաքային աշխատանքների առթիվ կոմյերիտականներին տալ կոնկրետ, անհատական և խմբակային հանձնարարություններ.

գ) Հավաքներում կոմյերիտականներին ուշի ուշով պատրաստել կոլլեկտիվ տնտեսություններ կազմակերպելու բնագավառում կոնկրետ աշխատանքներ տանելու համար։ Միաժամանակ լայն կերպով մասսայականացնել կուսակցության և խորհրդային իշխանության միջոցառումները՝ անհատական չքավորական-միջակային տնտեսությունների բարձրացման բնագավառում.

դ) Փոփոխիկ կազմին պատրաստել գյու-



ղում և արտադրության մեջ՝ յերիտասարդության Կարմիր բանակ կանչելու հարցերի առթիվ բացատրական աշխատանք տանելու համար։

## Բ. Միջհավաքային աշխատանքը

1. Կոմյերիտական կազմակերպությունները մինչև այժմ թույլ են մասնակցել միջհավաքային աշխատանքներին։ Հիմնական թերություններն են հանդիսացել.—

ա) Կադրի հետ տարվող աշխատանքի անբավարար լինելը նրա համալրման շըրջանում գտնված ժամանակամիջոցում.

բ) Փոփոխիկ կազմի մեջ տարվող աշխատանքի և կապի թուլությունը.

գ) Թույլ մասնակցությունը համալրման շրջանների և փոփոխիկ կազմի ուսումնասիրության գործում.

դ) Տեղական քաղաքացիական կոմյերիտական կազմակերպությունների հետ կապը չկարգավորելը, նրանց առաջ միջհավաքային աշխատանքի խնդիրներ դնել չկարողանալը։

Զորամասերի · կուսկազմակերպությունները, հատկապես Համ ԿԿ (բ) բջիջները թույլ են կենսագործել փոփոխիկ կազմի հետ կոմյերիտական կազմակերպությունների կողմից տարվող աշխատանքների ղեկավարությունը, զորամասի կոմյերիտական բյուրոների և աջակցության վաշտային խմբակների առաջ չեն դրել փոփոխիկ կազմի մեջ տարվող աշխատանքի կոնկրետ խնդիրները։

2. Կադրի հետ տարվող աշխատանքում անհրաժեշտ և հասնել.—

ա) Վաշտային կոմյերիտական խմբակների աշխատանքների կայունության և հաջորդականության.

բ) Կոմսոմոլի իդեոլոգիական կայունության և միաձուլության, դասակարգայնորեն-անհարազատ, կուլակային տարրերի ազդեցության հնարավոր դեպքերի վերացմանը, հատկապես համալրման շրջանում գտնված ժամանակամիջոցում։ Անհրաժեշտ է այդ ազդեցությանը հակադրել կուսակ-



ցության գլխավոր գծի պրոպագանդան գյուղատնտեսության բարձրացման և սոցյալիստական վերակառուցման բնագավառում.

գ) Կադրի կոմյերիտականների սերտ զոդում սահմանելուն և կարգապահության բարձրացման.

դ) Կադրի կազմի մեջ հակաբարոյական զանցանքներնու բացասական յերևույթները կանխելու և վերացնելու առթիվ կուսակցական կազմակերպությունների աշխատանքներում ակտիվ մասնակցելուն, հատկապես այն ժամանակ, յերբ կադրի կազմը գտնվում է համալրման շրջաններում.

ե) Փոփոխիկ կազմի հետ աշխատանքները հաջող տանելում կուսկազմակերպություններին և պետկազմին բազմակողմանիորեն աջակցելուն։

3. Կոմյերիտական կազմակերպությունները պետք է ապահովեն սերտ կապի հաստատումը կոմյերիտական փոփոխիկների, առաջին հերթին ակտիվի հետ, քաշելով

նրան միջհավաքային գործնական աշխատանքների մեջ։ Դրա համար անհրաժեշտ է.

ա) Գրավոր կապ պահել փոփոխիկ կոմյերիտական կազմի ակտիվի հետ.

բ) Անհատական և խմբակային հանձնարարություններ տալ կոմյերիտական փոփոխիկներին.

գ) Վաշտի շրջանում ապրող կոմյերիտական փոփոխիկներին քաշել խմբակների ժողովներին, այդ ժողովներում դնելով զեկուցումներ նրանց միջհավաքային աշխատանքների մասին.

դ) Հասնել նրան, որ քաղաքացիական կոմյերիտական կազմակերպությունները փոփոխիկ կոմյերիտականների ռազմական աշխատանքը համարեն միութենական հիմնական պարտականություններից մեկը.

յե) Կոմյերիտական պետկազմից շրջան գնացողների միջոցով գյուղերում և արտադրության մեջ տեղական կոմյերիտական քաղաքացիական կազմակերպությունների



հետ անցկացնել խորհրդակցություններ՝ միջհավաքային աշխատանքի կոնկրետ հարցերի առթիվ.

զ) Հասնել նրան, որպեսզի տեղական կոմյերիտական կազմակերպությունների համար (կոմիտեների, բջիջների) միջհավաքային աշխատանքը դառնա նրանց ամենօրյա աշխատանքների օրգանական մասը, որպեսզի կոմյերիտական բջիջները սիստեմատիկորեն հսկեյին ռազմական աշխատանքում փոփոխիկ կոմյերիտականների մասնակցությանը և աշխատանքի առթիվ կոնկրետ ցուցումներ տային նրանց.

է) Հրահանգավորումը և կոմյերիտական փոփոխիկների հետ ունեցած կապն ուժեղացնելու համար օգտագործել միօրյա հավաքները, փոփոխիկ կազմի ժողովներն ու կոնֆերանսները։

4. Փոփոխիկների կազմի և տրամադրությունների ուսումնասիրության համար կոմյերիտական կազմակերպությունները պետք է ակտիվ կերպով մասնակցեն կուս-

կազմակերպությունների և պետկազմի այդ ուղղությամբ տարած աշխատանքներին, այդ աշխատանքի մեջ գրավելով փոփոխիկ կոմյերիտական կազմի ակտիվին։ Անհրաժեշտ է սերտ կապ հաստատել տեղական քաղաքացիական կոմյերիտական կազմակերպությունների հետ։

5. Կոմյերիտական կազմակերպություններին առաջադրվող խնդիրները կարող են հաջողությամբ լուծվել միայն կուսկազմակերպությունների ամենորյա ղեկավարության բազմակողմանի ուժեղացումով։ ՀամԿԿ (բ) կուսբյուրոներն ու բջիջները պետք է զորամասի կոմյերիտական բյուրոյի և վաշտային խմբակների առաջ, վորոշ ժամանակամիջոցի համար, դնեն կոնկրետ խնդիրներ. առանձին կուսակցականների և կոմյերիտականների համալրման շրջանները գնալն ոգտագործել կոմյերիտական խմբակների մանրազնին հրահանգավորման և տրված ցուցումների իրացումն ստուգելու համար։

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0191449